
Սասնա
Տուն

Մկրտիչ Խերանյան

Սասնա Տուն

Հայ ժողովրդական դյուցազնավեպ

Համառոտ վերապատմեցին
Ա.Ն.Քյուրքչյանը
Լ.Ա.Տեր-Գրիգորյանը

ԱՌԱՋԻՐ ԵՐԿԻՐԸ
Ա
ՍՓ

Հաստատված է
ԿԳՆ Կրթության ազգային
ինստիտուտի կողմից:

Սույն հատորով «Էդիթ Պրինտ» հրատարակչությունը սկսում է *«Ճանաչի՛ր երկիրը քո»* խորագրով մատենաշարի հրատարակումը:

Մատենաշարը, սիրելի՛ ընթերցող, քեզ կպատմի հայերի ու Հայաստանի մասին՝ ովքեր ենք մենք՝ հայերս, ինչպիսի ճանապարհ ենք անցել, ինչպես ենք ապրել, ինչ սրբություններ ենք ունեցել, ինչ արժեքներ ենք ստեղծել և, վերջապես, ինչ հետք ենք թողել մարդկության պատմության մեջ:

Ազգային հիշողությունն է որ հայ մարդկանց պետք է օգնի՝ պահպանելու իր ինքնությունը մարդկության պատմության քառուղիներում:

Ճանաչի՛ր ու սիրի՛ր քո Հայրենիքը:

Խմբագիրներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր՝ **Դ. Գասպարյան**

բանասիրական գիտությունների թեկնածու՝ **Ա. Գալստյան**

բանաստեղծ՝ **Ե.Պետրոսյան**

Նկարիչ՝ **Վ. Կարապետյան**

Դիզայն՝ **Ա. Բաղդասարյան**

ISBN 99941-61-01-6
© Էդիթ Պրինտ
Երևան, 2015

Ծյուղ առաջին

ՍԱՆԱՍԱՐ ԵՎ ԲԱՂԴԱՍԱՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Դարեր, շատ դարեր առաջ Հայոց աշխարհում թագավորում էր մեծափառ Գագիկ արքան ալեզարդ:

Նա ուներ մեկ հատիկ աղջիկ. Ծովինար էր անունը Հայոց արքայի աղջկա: Նորաբաց վարդ էր նա՝ հասակը, ինչպես շատրվանը այգում, ծամերի ջրվեժն ուսերին, ծիծաղկուն, ինչպես Վանա ծովը...

Ծովինարի գեղեցկության համբավը գնացհասավ մինչև Մսրա[1] չար թագավորի ականջը: Մսրա թագավորը, հրապուրված, ճոխ նվերներով մարդիկ ուղարկեց Գագիկ արքայի մոտ և խնդրեց Ծովինարի ձեռքը: Գագիկ արքան զայրագին մերժեց նրա առաջարկը: Մսրա թագավորը, սաստիկ բարկացած, անթիվ-անհամար զորքով եկավ, որ քարուքանդ անի և ավերի Հայոց աշխարհը:

Այն ժամանակ Գագիկ արքան ժողովի կանչեց Հայոց աշխարհի մեծամեծներին: Ալեկոծ ծովի նման հուզվեցին ժողովականները, և որոշվեց մերժողական պատասխան տալ բռնակալ ամբարտավան թագավորին: Այն ժամանակ առաջ եկավ շիկնադեմ Ծովինարը և անուշ ձայնով, բայց հաստատակամ ու համարձակ ասաց.

- Հա՛յր իմ և դուք, սիրելի՛ ժողովականներ, վտանգի մեջ է մեր սիրելի հայրենիքը: Ես չեմ ուզում, որ իմ պատճառով կռիվ լինի, քաջեր զոհվեն, հարսներ այրիանան, և մանուկներ որբանան: Ես կինը կլինեմ կռապաշտ Մելիքի. թող ե՛ս զոհ լինեմ հայոց ազգին, միայն թե

[1] **Մսրա** - *Եգիպտոսի (Մսը՝ - Եգիպտոս)*

ծաղկած մնա Հայոց աշխարհը, և ազատ ապրի հայ ժողովուրդը:

Սակայն Գագիկ արքան Ծովինարի պատվերով պայման դրեց Մսրա թագավորի առջև, որ Ծովինարը մեկ տարի պիտի ապրի առանձին պալատում, և նրան պիտի թույլ տրվի դավանել[1] իր սուրբ կրոնը...

Մսրը մեկնելու նախօրեին՝ առավոտյան, Ծովինարն ուզեց հրաժեշտ տալ իր հայրենիքին, Կաթնով Աղբյուր գնալ զբոսանքի:

Ճամփա ելավ իր ընկերուհիների հետ: Բաժանվելու կսկիծը սրտում՝ Ծովինարը ճանապարհին հրաժեշտի անուշ խոսքեր ասաց հայրենի ծաղիկներին, ծառերին, թռչուններին, ջրերին, հայրենի արևին, աստղերին, հողին: Եվ երբ Կաթնով Աղբյուր հասավ, մի բուռ ջուր խմեց և ապա պապակը[2] հագեցնելու համար կես բուռ էլ խմեց՝ ասելով.

- Դո՛ւ էլ բարով մնաս, իմ պա՛ղ Կաթնով Աղբյուր անապակ[3],
Գնում եմ ես, որ դու զուլալ ու զով մնաս շարունակ...

Մսրա թագավորը հարսանեկան հանդեսով ճամփա ընկավ դեպի Մսը:

Պայմանի համաձայն՝ Մսրա թագավորը իր պալատի դեմ դիմաց մի շքեղ պալատ շինել տվեց, որտեղ իր հայրենիքից հեռու տխուր-տրտում ապրում էր Ծովինարը:

Հայրենի տնից հեռանալուց ինն ամիս անց Կաթնով Աղբյուրից խմած ջրից Ծովինարը ծնեց երկու մանչ զավակ: Տերտերը կնքեց նրանց. մեկի անունը դրեց Սանասար, մյուսինը՝ Բաղդասար:

[1] **դավանել** - *որևէ կրոնի հետևել*

[2] **պապակ** - *ծարավ*

[3] **անապակ** - *մաքուր, հստակ*

Մսրա թագավորը, զարմացած ու զայրացած, հրամայեց կտրել Ծովինարի գլուխը: Սակայն տեղի տալով նրա խնդրանքին և հավատալով, որ երեխաները ջրի ծնունդ են, տասը տարի ժամանակ տվեց, որ Ծովինարը կերակրի-մեծացնի նրանց:

Երկվորյակ եղբայրները մայրական կաթից կորյունների նման ուժ ու կորով էին ծծում և հազիվ չորս տարեկան՝ տասը-տասներկու տարեկանի ուժ ու հասակ ունեին:

Երբ երկու եղբայրները յոթ-ութ տարեկան եղան, մայրը նրանց պատմեց Մեսրոպ Մաշտոցի ու գրերի գյուտի մասին և սկսեց գրել-կարդալ սովորեցնել իր զավակներին:

- Ուսումը, որդի՛ք, լույս է, - ասաց նա.-
Անուսում մարդը՝ ինչպես խավարում,
Ինչպես լուսազուրկ կույրը խարխափի.
Ուսումն է մտքի աչքը բաց անում,
Նա է բանալին բոլոր դռների:

Սանասարն ու Բաղդասարը սկսեցին մեծ հաճույքով հայերեն գրել-կարդալ սովորել:

Ծովինարը հրճվում էր նրանց հաջողությամբ, սակայն մի միտք հանկարծ նրա դեմքից խլում էր ժպիտը. շուտով լրանալու էր թագավորի պայմանաժամը...

... Այնուհետև եղբայրները հաճախ էին տեսնում, որ իրենց մայրը, միայնակ և տխուր նստած իր օթյակում, լաց էր լինում գլխահակ:

Մի օր էլ Ծովինարը իր կյանքի տխուր պատմությունը պատմեց Սանասարին ու Բաղդասարին ...

Եվ ահա՝

Տասը տարին որ լրացավ, Մսրա անգութ խալիֆան
Մորն ու որդոց գլխատելու տվեց ահեղ հրաման...

Ծովինարը խնդրեց, որ առաջ ի՛ր գլուխը կտրեն, որպեսզի չտեսնի որդիների արյունը: Դահճապետի ահեղ գոռոցից վրա հասած Սանասարը մի այնպիսի ապտակ հասցրեց նրա երեսին, որ գլուխը թռավ անմիջապես: Դահիճներն էլ, զինաթափ ու գլխահակ, փախան ու դեպքը շնչակտուր պատմեցին Մսրա թագավորին:

Եղբայրները անվախ դեմ ելան նաև արքունի գնդին. կեսը կոտորվեց, մնացածներն էլ փախան: Մսրա թագավորը, մի անգամ ևս համոզվելով, որ աժդահա երկվորյակները իսկապես ջրի ծնունդ են, և Ծովինարը լիովին անմեղ է, նրան իր կինը հայտարարեց և իր երկրի թագուհին:

Թե հետո ինչ պատահեց, ինչ մտքով անցավ, խախտելով դաշինքը, դրժելով պայմանը՝ Մսրա բռնակալ թագավորը անթիվ-անհամար զորքով հարձակվեց Հայոց աշխարհի վրա, որպեսզի Գագիկ արքային իրեն հպատակեցնի և Հայաստանը հարկի տակ դնի:

Որոտացին հայոց քաջերը, կրակ ու բոց կտրած՝ կոտորեցին զորքը ուխտադրուժ Մսրա դաժան թագավորի, որն էլ սարսափահար, գլխապատառ ու շնչասպառ՝ Մսըր փախավ: Բայց և հայտնեց Ծովինարին իր միտքը նենգ, թե կենդանի չէր մնա, եթե չուխտեր իրենց երկու որդիներին՝ Սանասարին ու Բաղդասարին, զոհել Մսրա աստվածներին և կուռքերին:

Ծովինարը, տագնապահար, որդիներին պատմելով թագավորի ամոթալի պարտությունը հայերից և դաժան վճիռը նրա, աղաչեց, որ նրանք գաղտնի հեռանան Մսըրից, գնան Հայոց աշխարհ՝ պապի՝ Գագիկ թագավորի մոտ, այնտեղ շինեն իրենց տունը և ապրեն ազատ ու բախտավոր:

Եղբայրները, գիշեր գնալով, ցերեկ գնալով, Մսրա հողից դուրս եկան և հասան Հայոց հող:

Առաջ գնալով, զարմանքից քար կտրած՝ կանգ առան. մի մեծ գետ ահեղ գոռալով գալիս էր վերից, իսկ մի փոքր առու, նույնպես վերից գալով ու շեշտակի սուրալով, գետը ճեղքում էր երկու կեսի և նրա հունով առաջ էր գնում:

Ասում էին, թե ով որ այդ ջրի ակունքը գտներ և ակից խմեր, շատ քաջ ու անհաղթելի կդառնար՝ իսկ նրա ցեղի մարդիկ էլ այդ ջրի նման զորեղ կլինեին:

Երկու եղբայրները գտան այդ ջրի ակունքը և հագեցնելով իրենց ծարավը՝ որոշեցին հենց այդտեղ էլ շինել իրենց տունը: Ձեռք ձեռքի տված՝ դրին տան հիմքը և սկսեցին շարել պատերը: Բայց տխուր էին. չէ՞ որ մայրը պապի մոտ էր ուղարկել իրենց: Բերդը կիսատ թողած՝ եղբայրները ճամփա ընկան՝ Գագիկ պապին գտնելու: Եվ օթևանից օթևան երկար ճամփա կտրելով՝ հասան Վան:

Գագիկ թագավորը և Քեռի Թորոսը շատ ուրախացան՝ տեսնելով քաջ ու հսկա Սանասարին ու Բաղդասարին, որոնք դարձել էին իսկական կորյուններ՝ կտրիճ, թիկնավետ:

Որոշ ժամանակ այնտեղ մնալուց հետո եղբայրները որոշեցին վերադառնալ և իրենց կիսատ տունն ավարտել:

Գագիկ արքան գովեց իր թոռների որոշումը, օրհնեց նրանց և թանկ ընծաներով ճանապարհ դրեց: Ծեր արքան ուրախացավ նաև, երբ Սանասարն ու Բաղդասարը մի քանի տուն ժողովուրդ խնդրեցին պապից, որ իրենց բերդի մոտ բնակություն հաստատեն, և իրենք էլ մենակ չմնան:

- Դուք ոչ միայն քաջ եք, - ասաց,-
այլև խելոք բավական.
Ժողովրդից թե դուրս մնաք, հոտից
բաժան գառ եք դուք,
Անտառից դուրս՝ հողմի առաջ,
ինչպես մենակ ընկած տունկ...

Եվ պապը նրանց տվեց հիսուն տուն, հիսուն բեռով ալյուր ու հաց, կով, եզ ու այծ...

Եղբայրները երբ տեղ հասան իրենց քոչերի[1] հետ, նախ նրանց համար հիսուն տուն պատրաստեցին, հետո՛ միայն դարձան իրենց կիսատին:

Ժայռեր կիտեցին, վարպետ կանչեցին ու դեռ տարին չբոլորած՝ լեռան վրա մի լեռ էր կանգնած՝ սասուն[2] ժայռերով.

Ու մնաց բերդի անունը **Սասուն**,
էն տան անունն էլ մնաց **Սասնա տուն:**

Այնուհետև եղբայրները որսով էին զբաղվում:

Մի օր էլ եղբայրները գնացին, գնացին, հասան մի ծովի: Սանասարն ուզեց ստուգել ծովի խորությունը և քաջաբար նետվեց ծովը: Սուզվելով ծովի հատակը՝ նա տեսավ մի չքնաղ պարտեզ, պարտեզում՝ մի վեհաշուք մարմար-

[2] **քոչ** - *սար՝ամառանոց և այլն գնացող մարդկանց ու կենդանիների մեծ խումբ*

[2] **սասուն** - *սաստիկ մեծ, վիթխարի, ահռելի*

յա պալատ սպիտակ, դռան առջև՝ մի ջինջ աղբյուր ու ավազան մի հստակ: Դռնից կապված էր մի ձի՝սադափե թամբը վրան: Թամբից կախված էր հսկա մի թուր՝ կայծակի պես հուրհրան:

Այս գեղեցկությունից Սանասարի ուշքը գնաց տեղնուտեղը: Արթուն թե քնած վիճակում էր նա, երբ մի բարձրահասակ ծերունի հայտնվեց և այսպես խոսեց.

- Ելլ, Սանասա՛ր, հերիք քնես,
Մտի՛ր ծովի պալատը պերճ:
Այդ պալատում դու կտեսնես
Մի պահարան ու նրա մեջ՝
Զրահ-շապիկ[1] ու ոտնաման,
Ամուր գոտի, գուրզ [2] ահագին,
Նետ ու աղեղ, վերտ[3] ու վահան.
Կտիրանաս այդ բոլորին:
Այնտեղ է և ամենահաղթ
Խաչ Զորավոր Պատերազմին:
Թե արժան ես, նա կթռչի
Ու կբազմի քո աջ թևին:
Սա էլ Քուռկիկն է Զալալին՝
Մեջքին սադափ թամբը զարկած,
Երկնուց ընկած Թուր Կայծակին՝
Էդ սադափե թամբից կախված:
Ավազանում կլողանաս,
Յոթնապատիկ կուժովանաս,
Ջին կհեծնես, կասպանդակես,
Կճեղքես ծովն ու դուրս կգաս:
Հրեղեն ձի է, Սանասա՛ր,
Ուր որ ուզես, քեզ կտանի,
Կհասցնի նպատակիդ,
Քեզ միշտ անփորձ կպահպանի:

Սանասարը զարթնեց հանկարծ, սակայն իր շուրջը մարդ չգտավ: Սթափվելով՝ վեր

[1] **զրահ-շապիկ** - *մետաղյա շապիկ, որը զինվորը հագնում էր՝կուրծքը և կռնակը զենքի հարվածից պաշտպանելու համար*

[2] **գուրզ** - *երկաթե մեխեր ունեցող մեծ գլխով հաստ ու կարճ գավազան, որը հնում գործածում էին որպես զենք*

[3] **վերտ** - *մետաղալարից հյուսված ցանցավոր զրահաշապիկ*

թռավ և արագ պալատ վազելով՝ ամեն ինչ արեց ծերունու պատվիրանի համաձայն: Փորձելով իր տիրոջը և չկարողանալով նրան ո՛չ գետին զարկել, ո՛չ արևին հասցնել, որ խարկեր աղբյուրի ջրից սերված հսկայակերպ դյուցազնին՝ ձին լեզու առավ ու ասաց.

- Ապրե՛ս, կտրի՛ճ, վայել է քեզ,
Տա՛ր ինձ հիմա, ուր որ կուզես,
Տա՛ր ու հասի՛ր քո մուրազին:
Իմ տերն ես դու այսուհետև,
Իսկ ես՝ քո ձին:

Բաղդասարը չհավատաց աչքերին, երբ ծովափին նստած եղբոր կորուստը ողբալիս ծովը բացվեց, և ահագին անդունդից դուրս ելավ զենք ու զրահ հագած Սանասարը:

Անցան օրեր: Երկու եղբայրները որոշեցին Մսըր գնալ և իրենց մորը՝ Ծովինարին, փախցնել բերել իրենց բերդը՝ անուշ Սասուն:

Ուրախացավ մայրը, բայց և տագնապեց, որ թագավորը կիմանա ու եղբայրներին մատաղ կանի իր աստվածներին: Սակայն Սանասարն ինքը թրատեց թագավորին: Եվ կոտորելով իրենց հետապնդող թշնամուն՝

...Եղբայրները համբուրեցին
Սրերն իրենց, դրին պատյան
Եվ իրենց մոր հետ միասին
Ճամփա ընկան դեպ Հայաստան:

Երեք հեծյալները որոշեցին նախ այցելել Գագիկ արքային: Գարնանային անուշ մի առավոտ Գագիկ արքան և Քեռի Թորոսը, ուրախության արցունքն աչքերին, հաց ու գինիով ընդա-

ռաջ գնացին նրանց, և միմյանց փարվելով՝կարոտով համբուրվեցին ցնծագին:

Եվ քանի՜-քանի՜ յոթ օր յոթ գիշեր ուրախանալուց հետո երկու եղբայրները իրենց մոր հետ ճամփա ընկան դեպի Սասուն: Քեռի Թորոսն էլ հեծավ իր ձին ու գնաց նրանց հետ:

-Սասունն, - ասաց, - անո՜ւշ տեղ է ...
Ու միշտ այնտեղ էլ մնաց:

Շատ ու շատ մարդիկ, Սանասարի քաջության մասին լսելով, գալիս լցվում էին Սասուն՝ ընտանիքով, տուն ու տեղով:

...Եվ Սասունը շատ շուտով
Դարձավ երկիր բազմաբնակ, ուր ամեն ոք անվտանգ
Շունչ էր քաշում, ապրում ազատ՝
Սանասարի թևի տակ:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Պղնձե քաղաքի Քաջանց աշխարհի թագավորն ուներ մի աղջիկ: Չքնաղ էր նա, քառասուն ճյուղ ծամերն իջնում էին ուսերն ի վար. դրա համար էլ նրա անունն էր Քառասուն-Ճյուղ-Դեղձուն-Ծամ:

Սանասարի քաջության համբավը հասավ Քառասուն-Ճյուղ-Դեղձուն-Ծամի ականջին, և թագավորի աղջիկը սիրեց Սանասարին:Նա սիրո խոստովանության թուղթ ուղարկեց Սանասարին, թե քառասուն կտրիճ քառասուն ամիս իր հոր պալատի պարիսպների տակ ծոմ ու ծարավի կանգնել՝ իրեն են ուզում, սակայն իր սիրտը բաց է միայն Սանասարի առաջ:

Եվ սիրո անմար կրակը վառվեց նաև Սանասարի սրտում: Ծովինարն էլ էր ուզում հալալ-կաթնակեր մի հարս բերել տուն.

- Կրակը, որդի՛ս, կինն է պահպանում ,
Տունն ու աշխարհը կինն է շեն պահում:
Կինն է երջանիկ կյանքի բանալին,
Գնա բե՛ր, որդի՛ս, քո Դեղձուն-Ծամին...

Երբ Սանասարը հեծավ իր ձին, ասպանդակեց ու սրարշավ հասավ Պղնձե քաղաքի դարպասներին, պատի տակ շարված տեսավ քառասուն կտրիճ՝ անհույս սպասումից սպիտակած մազերով, որոնց մերժել էր Դեղձուն-Ծամը՝ դարպասի դուռն իսկ առանց բանալու:

- Ինչու՞ պիտի ես սպասեմ, որ իմ առաջ դուռ բանա.
Ամեն մարդ իր իսկ ձեռքով դուռն իր առաջ պիտ բանա:

Այսպես ասաց Սանասարը և կանչելով Խաչ Պատերազմին՝ մի ասպարեզ[1] հեռացավ, եկավ թափով և պարսպից թռավ անցավ Շանթի պես...

Սանասարը հեռվից տեսավ թագավորի աղջկա դղյակը, դարպասի մեծ սյան ծայրին՝ ոսկի մի խնձոր, իսկ աշտարակի գլխին՝ մի գուրզ ահագին: Թագավորի պայմանն էր. իր աղջկան կտար նրան, ով կարողանար խնձորը սյան գլխից ցած բերել, ապա բարձրանալով՝ նորից իր տեղը դնել և ցած բերել ահագին գուրզը...

Գիշեր էր արդեն:

Կտրիճը կանչեց Խաչ Պատերազմին, և երբ ձին նրան մինչև սյան ծայրը թռցրեց, Սանասարը ձեռքը գցեց և առավ ոսկի խնձորը: Երբ ձին մեկ էլ թռավ, Սանասարը գուրզն էլ հանեց տեղից և թափով այնպես վերից վար զարկեց, որ գուրզը մի գազ[2] խրվեց հողի մեջ:

Առավոտյան թագավորը տեսավ՝ գուրզը տեղահան է արված, խնձորն էլ չկա: Զայրացավ թագավորը, բայց և զարմացավ. անշուշտ կտրիճ տղամարդ է նա:

Որպեսզի համոզվեր, նրա հրամանով Սանասարը ձին հեծած խնձորն իր տեղը դրեց: Սակայն երբ գուրզի հարվածի թափից բուրգը փուլ եկավ, թագավորը առավել ևս զարմացավ ու մատը կծեց: Այդ ժամանակ նա մի նոր պայման դրեց՝ ասելով.

[1] **ասպարեզ** - *երկարության չափ (230, 112 մետր)*

[2] **գազ** - *երկարության պարսկական չափ (112սմ)*

- Էդ շնորհքը տակիդ ձիուն է,
Ու թե որ ձեռքիդ շնորհքն էլ ցույց տաս,
Այնժամ նոր միայն աղջիկս քոնն է:

Սանասարը պետք է հաղթեր նաև թագավորի վաթսուն հսկա,հաղթամարմին քաջերին: Մեկը վաթսուն հսկայի դեմ՝ կանգնեց նա Սիփան սարի պես: Երբ կատաղած առյուծի նման իրար հասան, Սանասարը քառասուն հսկա փռեց գետին, սակայն վարար գետի նման հոսող արյունը բռնեց[1] Սանասարին ու հսկաներին, որով և չկարողացան հարվածել մեկը մյուսին:

[1]**բռնել** - *այստեղ՝ պատել*

... Անհանգիստ էր Բաղդասարը. հիշեց խոսքերն իր եղբոր.

«Երեք օրից ետ կգամ, սպասի՛ր,
Իսկ երեք օրից եթե ետ չեկա,
Իմացի՛ր՝ նեղն եմ, օգնությա՛ն հասիր... »:

Բաղդասարը հեծավ իր ձին, ասպանդակեց, թռավ հասավ Պղնձե քաղաքի պղնձակուռ պարիսպներին, եղբոր նման ինքն էլ գնացեկավ և ծանր գուրզով զարկելով պարիսպներին՝ճեղքեց պատը, ճամփա բացեց. տեսավ եղբորն արյան մեջ կանգնած, որ անկարող էր իր սուրը շարժել: Քաշեց սուրը, մտավ կռվի ասպարեզ. քսան անգամ փայլատակեց նրա սուրը շանթարձակ ու քսան հոգուն գետին փռեց Բաղդասարն իր ոտքի տակ: Եվ երկուսով խրոխտաքայլ արքայի դեմ կանգնեցին.

- Դե՛, թագավո՛ր, մերն է հիմա քո Դեղձուն-Ծամն, - ասացին...

Այդ ժամանակ ամբոխը ճեղքելով նրանց մոտեցավ մի ծերունի: Լսելով եղբայրների քաջության համբավը՝ հեռվից եկել էր նա՝ օգնություն խնդրելու.

- Երեք տարի է՝ մի հրեշ վիշապ
Դրել է երախն աղբյուրի ակին,
Խմում է նրա ջուրն ագահությամբ
Ու բաց չի թողնում կաթիլ քաղաքին:

Չորացել էին այգիները, դաշտերն ու արտերը: Մեծ ու փոքր մեռնում էին ծարավից: Դրա համար էլ քաղաքի անունը դրել էին Անջուր: Եվ ահա ծերունին խնդրում էր, որ եղբայրները գնան սպանեն հրեշ-վիշապին և ջուր տան ծարավ Անջուր քաղաքին:

Եղբայրները շտապեցին՝ Անջուր քաղաքը փրկելու: Հասնելով քաղաք՝ մի-մի ջաղացքար անցկացրին իրենց թևերին, գնացին հասան աղբյուրի ակին, որտեղ ամբողջ հասակով պառկած՝ մեծագլուխ, հաստամարմին, գալար-գալար պոչով զարհուրելի գազանը խմում էր ջուրն ագահորեն՝երախը լայն բաց արած: Բաղդասարը քարը նետեց, մեջքը փշրեց վիշապի, իսկ Սանասարը հուժկու զարկով գլուխն արեց քարաջախջախ:

Ժողովուրդը, ուրախության արցունքն աչքերին, օրհնեց եղբայրներին, որ ջուր և ուրախ կյանք բերեցին Անջուր քաղաքին:

- Այս օրվանից քաղաքը մեր Կանաչ
քաղաք թող կոչվի, -
Բացականչեց բազմությունից մի
խանդավառ պատանի...

Եղբայրները շնորհակալություն հայտնեցին օրհնանքի ու մաղթանքների համար և փոթորկի պես թռան դեպի Պղնձե քաղաք՝ Դեղձուն-Ծամի ետևից:

... Խթանելով ձիերն իրենց՝ երկու
եղբայր քաջազուն
Դեղձուն-Ծամի հետ միասին ճամ-
փա ընկան դեպ Սասուն...

Ճանապարհին, սակայն, մի հեծյալ կտրեց նրանց ճամփան: Բաղդասարը քաջարի՝ կռվի բռնվեց նրա հետ: Ելան-ընկան, Բաղդասարը գետնեց նրան. աղջիկ էր նա՝ Արևելից թագավորի դուստրը՝ անունն Արմաղան: Ծատերն էին խնդրել նրա ձեռքը, սակայն նա ուխտել էր՝ ամուսին կընտրի էն քաջին, որ կռվի մեջ կհաղթի իրեն ու կզարկի գետին...

Ուրախացավ Քեռի Թորոսը, օրհնեց Ծովինարը որդիներին ու հարսներին, և ցնծաց Սասնա ժողովուրդը: Հարսանեկան սեղան բացվեց, և յոթ օր ու յոթ գիշեր հնչեց զուռնա-նաղարան[1]:

Անցան տարիներ:

Բաղդասարն ու Արմաղանը զավակ չունեցան և այս աշխարհից գնացին անժառանգ: Ծովինարն էլ արդեն վաղուց խառնվել էր հողին:

[1] **նաղարա** - *փոքրիկ թմբուկ, որը նվագում են երկու փայտե ձողիկներով*

Ու մնացին Սանասարն ու Թորոս Քեռին
վշտաբեկ՝
Դեղձուն-Ծամի և իր կայտառ որդիների
հետ երեք՝
Անունները՝ Վերգո, Օհան *և վերջինինը՝*
Միեր:
Մեծ եղբայրը՝ Վերգոն, վախկոտ, թուլա-
կամ էր, անարի,
Իսկ միջնեկը՝ Օհանն, ուժեղ իր ձայնով
էր անվանի.
...Դրա համար իրեն Ձենով Օհան էին
անվանում:
Եղբայրների մեջ քաջարին Միերն էր
հաղթ ու հսկա,
Իր հոր որդին, որը հետո դարձավ
պարծանքը Սասնա:

Ծյուղ երկրորդ

ՄԵԾ ՄՀԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Սանասարը մահվան մահճում իր մոտ կանչեց Դեղձուն-Ծամին և պատգամ տվեց, որ ամենագութ մայր լինի ոչ միայն իրենց երեք որդիներին, այլև ամբողջ ժողովրդին ու պահի-պահպանի նաև Սասունը. Թորոս Քեռու հետ իրենց ձեռքում ամուր պահեն Թուր Կայծակին ու չթողնեն, որ նենգ թշնամին մոտ գա Սասունին: Երեք որդիներից իր հույսը Միհրն էր, սակայն նա հազիվ հինգ տարեկան էր դեռևս:

Այդ ժամանակ Մսրա գահին թագավոր էր նստել գոռոզ խալիֆայի[1] Մելիք որդին: Ծովինարը թագավորին չէր ընծայել ոչ մի որդի. մի այլ կնոջ ծնունդ էր նա: Մելիքը վառվում էր, թե ինչպես անի, որ իր հորն սպանողից՝ Սանասարից, վրեժ հանի: Սակայն և իզուր կատաղում էր նա. Սասնա հսկան սարսափ էր ազդում թշնամու վրա:

Մելիքը հենց որ լսեց, թե էլ չկա Սանասարը, զորքով եկավ Սասնա վրա, որ Սասունն իրեն հպատակ ու հարկատու դարձնի:

Դեղձուն-Ծամն ու Թորոս Քեռին խորհուրդ արեցին, որ չգրգռեն դև Մելիքին: Բայց և ժամանակ շահելու համար խոստացան, որ հարկը կտան:

Միհրը տասը տարեկան դարձավ: Տարան նրան Վանք-վարժատուն: Սովորեց գրել-կարդալ: Մտքի լույսով տեսավ չարն ու բարին. սիրեց բարին, ատեց չարը: Ու երդվեց նա՝ նմանվելու իր պապերին ու իր հորը:

[1] **Խալիֆա** - *արաբական իշխանության միապետ*

Միերը որոշեց զբաղվել նաև որսորդությամբ: Նետ-աղեղն առած՝ օրնիբուն վազում էր որսի ետևից:

Մի օր էլ Թորոս Քեռին նրան տեսավ շատ բարկացած ու զայրացած.

- Ամբողջ օր ոտքով սարեսար թռել,
Չեմ կարողացել մի աղվես բռնել...

Թորոս Քեռին նրան խորհուրդ տվեց գնալ Մուշ և իր անունից մի ձի խնդրել Գորգիկ իշխանից:

Իշխանի քառասուն ձիերից ոչ մեկին չհավանեց Միերը. ո՛ր ձիու մեջքին զարկում էր ծանր ու հուժկու իր բռունցքով, ձին իր փորը գետին էր տալիս: Երբ հուսահատ դուրս էր գալիս գոմից, հանկարծ մի քուռակ տեսավ: Փորձի՞, թե՞ ոչ. խաղի համար երբ մի բռունցք տվեց քուռակի մեջքին, քուռակը մի այնպիսի քացի տվեց, որ եթե Միերին դիպչեր, մինչև Սասուն կթռչեր: Հենց այդ քուռակին էլ չորս ոտքերից մի փայտի կապելով և ուսը գցելով՝ Միերը բռնեց Սասունի ճամփան:

Քեռի Թորոսի՝ մի երեք ամիս պահել-խնամելուց հետո քուռակը դարձավ հեծնելու հրեղեն ձի, որով Միերը, իր հոր նետ-աղեղը ուսին, ոտքի տակ էր տալիս Սասնա սար ու ձոր և ինչքան որս աներ, բաժանում էր սասունցիներին:

Եվ յոթ տարիներ Միերն այդպիսով
Պահեց բովանդակ Սասունը որսով:

Մի ժամանակ Սասնա երկրում հացի մեծ թանկություն եղավ: Խեղճ ժողովուրդը կոտոր-

վում էր սովից: Ամեն տնից հառաչանքի ձայն էր լսվում.

- Անոթի՜ եմ, մարե՜, մի կու՜տ...
- Մեռնու՜մ եմ, մի փշուր հա՜ց...

Մղկտում էր Միերի սիրտը՝ երեխաների լացի ձայնը լսելով: Չդիմանալով՝մի օր էլ գնաց կանգնեց Քեռի Թորոսի առաջ.

- Քեռի՛, ի՞նչ ես նստել հանգիստ.
Ժողովուրդը ձեռքից գնաց:
Նրանց լացին,
Լացուկոծին
էլ չեմ կարող, չեմ դիմանա,
Ի սե՜ր Աստծո, մի ճա՜ր արա...
- Ի՞նչ ճար անեմ ես, ա՜յ որդի,
Ես էլ քեզ պես ժողովրդի
Ցավով տանջվում, տապակվում եմ,
Բայց իմ ձեռքում ի՞նչ ճար ունեմ...
-Քեռի՛, ինչո՞ւ թանկություն է,
Ու հաց չկա.
Ինչի՞ց է դա...
-Վար ու ցանքը մեզ մոտ քիչ է.
Այծ ենք պահում, կով ու կթան...
Իսկ մեր հացը հեռու տեղից՝
Գալիս էր, հո՜ւ, Շամ-Հալաբից...
Լույս է ընկել առյուծ մի մեծ,
Որ պառկել է ճամփի վրա
Ու չի թողնում մարդ գնա-գա...
Ու հենց դրա համար, տղա՛ս,
Թանկություն է, հացի պակաս...
- Հա՜, հասկացա,- Միերն ասաց...

Եվ Միերը որոշեց հաջորդ առավոտյան գնալ և սպանել առյուծին.

-Լավ է առյուծը ինձ ուտի,
Քան թե քաղցած ժողովրդի՝
Մոր ու մանկան լաց ու կոծի
Աղաղակը սիրտս խոցի...

Եվ Միերը վաղ առավոտյան, իր ձին հեծած, ճամփա ընկավ՝ առյուծին սպանելու: Մի խումբ երիտասարդ սասունցիներ, հագած-կապած զենք ու զրահ, գնացին Միերի ետևից՝ թև ու թիկունք լինելու նրան:

Հասան Սև սար և բարձունքից ցած նայելով՝ տեսան մի ահեղ գազան, պառկած, ամուր փակել էր կիրճի բերանը: Առյուծը, նրանց տեսնելով, մի այնպիսի ահազարհուր մռունչ արձակեց, որ դղրդաց ամբողջ Սասունը: Սակայն Միերը, որ առյուծ չէր էլ տեսել, գոտին անահ պնդեց, թևը սոթտեց ու արգելելով, որ իրեն օգնեն, մեն-մենակ առաջ խոյացավ գազանի վրա: Մարդ ու գազան, իրար գրկած, երկար ժամանակ պտույտ էին գալիս գետնի վրա հոլի նման, մինչև որ Սասնա հսկան հաղթ առյուծին զարկեց գետին, սարի նման չոքեց վրան և մի ձեռքը գցելով մի ծնոտին, մեկն էլ՝ մյուսին՝ գազանին ձևեց - արեց երկու կտոր, մեկը դրեց ճամփի մի կողմ, մյուսն էլ՝ մի կողմ ու ձայն տվեց քրտնաթոր.

- Սասունցինե՜ր, Շամ-Հալաբի ճանապարհը բաց է, ահա,
Բեռներն առե՛ք, գնացե՛ք Շամ ու հա՛ց բերեք առատ-առատ,
Թող կուշտ ուտեն մեծ ու պզտիկ, ու չմնա սոված մի մարդ...

Միերի հետ եկած մարդիկ մոտ վազեցին, գրկեցին նրան ու ասացին.

- Ապրե՞ս, Միե՛ր, մեր քա՛ջ Միեր...
Ճիշտ է, որ մեր վիշապասպան
Սանասարի որդին ես դու...
Համբավն իսկույն հասավ Սասուն.
- Աչքներս լու՞յս լինի, - ասին,-
Սանասարի որդի Միերն սպանեց
ժանտ էն առյուծին,
Ձևեց արեց երկու կտոր. մինչև էսօր
Միեր էր նա,
Այսուհետև կոչվելու է **Առյուծաձև**[1]
Միեր Սասնա...

[1] **առյուծաձև** - *առյուծ ձևող*

Միերը ընկերների հետ ուրախ-զվարթ վերադարձավ Սասուն: Սասունն ամբողջ ցնծագին դիմավորեց Միերին և խնդրեց նրան իր դյուցազուն հոր՝ վիշապահաղթ Սանասարի նման իրենց տերն ու հայրը լինել և կառավարել երկիրը: Եկան նաև Դեղձուն-Ծամն ու Թորոս Քեռին: Համբուրելով որդու ճակատը՝ մայրը նրան հանձնեց հոր հրեղեն ձին, զենքերը հոր, Թուր Կայծակին՝ ասելով.

- Թող քո սրի տակ չարը՝ միշտ անզոր,
Ու կորագլուխ լինի թշնամին:
Միերը չոքեց, համբուրեց իր մոր
Ձեռքը ու տարավ դրեց իր սրտին:
-Միշտ քո՛նն եմ, - ասաց, - ու՝ ժողովրդի՛ն:

Դեռ քսանմեկ տարեկան էր Սանասարի որդին՝ Միերը: Գեղեցիկ էր, ինչպես Արան, բարձրահասակ ու լայնալանջ, ինչպես Հայկ Նահապետը:

Օժտված բոլոր շնորհներով՝ Միերը
քաջ, գեղատես,
Օրըստօրե հասակ առնում, հսկայա-
նում էր հոր պես:

Սասնա աղջիկները պտույտ էին գալիս Միերի շուրջը, սակայն Միերը, անտարբեր նրանց սիրուն ու հմայքին, ընկերների հետ ամբողջ օրը ջիրիդ[1] էր խաղում ու որսի գնում և որսից բոլորին բաժին հանելով՝ խաղաղ հոգով պառկում էր քնում:

Մի օր՝ որսից վերադառնալիս, Միերը տեսավ մի գուսանի, որն իր շուրջը հավաքած ջահել երիտասարդների ու աղջիկների, սազը ձեռին՝ նվագում էր ու երգում: Միերը խնդրեց, որ գուսանը մի երգ էլ իր համար հյուսի: Ծեր գուսանը, նայելով երիտասարդին ու հիշելով Վասպուրական աշխարհի Գոռ իշխանի աղջկան՝ անանման Գոհարին, մտքում ասաց, թե սրանք երկուսով հարմար են իրար ու կարծես մեջտեղից կիսած մի խնձոր լինեն:

Եվ սազի լարերին զարկելով՝ ծեր գուսանը Վանա չքնաղ վարդի գովքն արեց՝ մինչ այդ անծանոթ սիրո կրակը վառելով Միերի սրտում:

Դեղձուն-Ծամն արդեն պսակել էր Վերգոյին ու Օհանին: Եվ շատ ուրախացավ՝ լսելով Միերի՝ Գոհարին կին բերելու որոշումը:

Դեղձուն-Ծամի օրհնանքն առնելով՝ Միերը ճամփա ընկավ դեպի Վան: Անցնելով Բաղեշ, Նարեկ, Տշող ու Ոստան՝ Միերը հասավ Վան ու ներկայացավ Գոռ իշխանին: Իշխանը շատ ուրախացավ, որ իր աղջկա ձեռքը խնդրողը Սասնա Առյուծաձև Միերն է: Եվ երբ Գոհարին հայտնեց լուրը, աղջիկն ասաց՝ ուրախության արցունքն աչքերին.

[1] **ջիրիդ** - *հեծյալ երիտասարդների մրցախաղ, որի ժամանակ ձիերը քշելով՝ մականներով հարվածում են իրար*

- Սասնա կտրիճ դյուցազունին ես
վաղուց եմ սպասում
Եվ գիտեի, որ պիտի գար. տեսել էի
երազում...

Միերը յոթ օր մնաց Վանում. տեսավ ամեն տեղ դպրատուն ու վանք և ուխտ արեց՝ երբ Սասուն վերադառնա, մտածի ժողովրդի միտքը լուսավորելու մասին:

Եվ ութերորդ օրը Միերը հարսնևորներով դուրս ելավ Վանից ու մյուս օրն ուրախ, երգ-աղմուկով մտավ Սասուն: Ձենով Օհանը, Դեղձուն-Ծամի խորհրդով, հարսանիքի կանչեց Սասնա ամբողջ ժողովրդին:

Յոթ գիշեր ու յոթ ցերեկ հնչեց ուրախ երգ ու ծիծաղ, հոսեց հայոց ազնիվ գինին, և Սասունն ամբողջ տոն էր տոնում, հարսանեկան շքեղ հանդես...

Միերի առաջին գործն եղավ վանք ու դպրատուն շինել տալ, որպեսզի ժողովուրդը ուսում առնի, և մտքի խավարը փարատվի: Միե-րը Սասուն հրավիրեց ճարտարապետ, հմուտ վարպետ Թևաթորոսին, որպեսզի վանք շինել տա Մարութա սարում ու մեծ դպրատուն-մես-րոպյան տաճար:

Լսելով Միերի այդ որոշման մասին՝ վարպետ Թևաթորոսն ասաց.

- Պե՞տք են, պե՞տք, Միե՛ր, դպրատուն
ու վանք,
Որ լույսով մնանք ...
Քանզի մտավոր խավարն ավելի
Վատ է, քան ամեն ոսոխ բարբարոս.
Կկորչի նավը ծովում անփարոս...

Տարին չանցած՝ Մարաթուկ լեռան ուսին բարձրակառույց ու գեղեցիկ մի վանք բարձրացավ և դպրատուն: Միերը մի խաչ տնկեց նրա վսեմ, երկինք հասնող գմբեթին ու նայելով հասակն ի վեր երկնակարկառ այդ շենքին՝ ***Մարութա Բարձր Աստվածածին*** դրեց անունը վանքի:

Այնուհետև Ծովասար լեռան կանաչ լանջին մի հսկա անտառ տնկեց, պարիսպ քաշեց անտառի շուրջ, մեջը լցրեց մանր ու մեծ ամեն տեսակ կենդանիներ ու թռչուններ բազմազան և թողեց, որ այդ անտառում աճեն ազատ, բազմանան...

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Անցնում էին տարիները: Սասունը բարգավաճում էր Միերի հովանու տակ: Սասունցիները գոհ էին ու լիասիրտ օրհնում էին Միերին, որ հոր նման հոգ էր տանում բոլորին:

Զայնը գնաց հասավ Մսըր, ականջն ընկավ Մելիքի. մեծացել է Սանասարի կրտսեր որդին աժդահա, և Սասունն ազատ շունչ է քաշում հովանու տակ նրա:

Հարկահաններ ուղարկեց Մելիքն անմիջապես և տասը տարվա հարկը ուզեց Սասունից:

- Ի՜նչ հարկ, ի՜նչ բան, ի՜նչ տասը տարի,-
Միերն ասաց զայրալից, -
Մսրա Մելիքն ո՞վ է և ի՞նչ հարկ է ուզում
ինձանից...

Զենով Օհանն ու Վախկոտ Վերգոն ձեռ-ոտ ընկան, որ Միերը գնա, քաղցրությունով աղերսի Մելիքին, որ գոնե հարկը թեթևացնի: Բարկացավ Միերը.

-Մելիքն ո՞վ է, որին պիտի խնդրեմ, որ մեզ
գթա նա.
Չարին ինչքան որ աղաչես, չարն էնքան
չար կդառնա:
Մեր հոր օրով հարկատո՞ւ էր ինչու Սասու-
նը Մսրա:
-Մեր հոր օրով Մելիքը սի՞րտ կաներ գալու
մեզ վրա...
-Հիմա էլ, չէ՛, սիրտ չի անի. չկա մեր հայրը
հզոր,
Բայց Սասունը անպաշտպան չէ. նրա որ-
դի՛ն կա այսօր:

Եվ դառնալով Մսրա մարդկանց՝ ասաց, որ վերադառնան Մսըր ու հայտնեն, որ Միերը՝ Սանասարի որդին, հենց ինքը կգա և կբերի իր հետ բոլոր հարկը տասը տարվա...

Միերը հագավ զենք ու զրահը, հեծավ իր Քուռկիկ Ձալալին, թռավ Մսըր ու նստեց ուղիղ Մելիքի դեմ դիմաց: Մելիքի լեզուն երկյուղից կապվեց, սակայն և ուժ հավաքելով՝ հարցրեց, թե Միերը բերե՞լ է արդյոք խոստացված հարկը տասը տարվա:

Բայց դու էն ե՞րբ դրիր, ասա՛, մեր
երկիրը հարկի տակ,
Ո՞ր օրվանից Սասունն անկախ դար-
ձավ Մսրա հպատակ:
-Սանասարի մահից հետո...
-Սանասարը մեռել է, բայց Սանա-
սարի որդի՛ն կա...

Միերն ապա հանդիմանական շեշտով ավելացրեց.

-Մելի՛ք, Մելի՛ք, մենք ենք հիմնել մեր
Սասունը, մեր երկիրն է հարազատ,
Եվ ուզում ենք մեր հայրենի հողում ապ-
րել միշտ ազատ...
Այլոց հողին մենք աչք չունենք, մեր հո-
ղից էլ չենք զիջի,
Մեր տան տերը մենք ենք, Մելի՛ք, ուրիշ
տեր չենք ճանաչի...
Լավ է սիրով և ո՛չ սրով, արյուն թող որ
չթափվի,
Մսըրը՝ ձեզ, Սասունը՝ մեզ, ապրենք որ-
պես դրացի:
-Չէ՛, չի՛ լինի, -Մելիքն ասաց, - պետք է
կռվենք դու և ես:
-Կռվե՛նք, կռվից չեմ վախենում, դո՛ւրս եկ
իսկույն ասպարեզ:

Եվ երկու հսկաները՝ քաջ Միերն ու Մսրա Մելիքը, երեք օր կռիվ արեցին, զարկին իրար: Մելիքն արդեն հոգնել էր խիստ, և թևերի մեջ ուժ չկար. գոռաց ասաց.

- Միե՛ր, հերի՛ք,էլ մի՛ զարկի, էլ մի՛ զարկի.
Սասունը ինձ հարկատու չէ...
էլ Սասնա հետ գործ չունեմ ես, ձեր Սասունը թող մնա ձեզ...
- Ես էլ քո կյա՛նքն եմ բաշխում քեզ...
Մենք կռվի հետ գլուխ չունենք և սրի՛դեմ միայն, Մելի՛ք, սուր կհանենք...-
Միերն ասաց, ձին ասպանդակեց, քշեց Սասուն.
- Սասունցինե՛ր, այսուհետև էլ ոչ մի հարկ...
Մերն է եղել Սասունն ազատ ու միշտ էլ մեզ պիտի մնա...

Ցնծաց Սասնա ժողովուրդը: Դեղձուն-Ծամը գրկեց որդուն, և Գոհարը կարոտակեզ դիմավորեց իր Միերին:

Անցան տարիներ: Մեռավ Մսրա թագավոր Մելիքը: Մելիքի կինը՝ Իսմիլ խաթունը, որ Սասնա տնից եկած դյուցազնին տեսնելու օրից վառվում էր նրա կրակով անմար, սիրո գիր գրեց Սասնա Միերին՝ եզրափակելով.

«Ուղարկում եմ քեզ լաչակս ու գոտիս,
Արի՛, տե՛ր եղիր երկրիս ու սրտիս.
Միացրո՛ւ հարուստ Մսրն աշխարհիդ:
Թե չգաս, Միե՛ր, լաչա՛կս գլխիդ...»:

«Թե չգաս, Միե՛ր, լաչա՛կս գլխիդ». այս խոսքը շատ խոր խոցեց Միերին, և ասաց գիր բերողներին.

- Երեք օրից ետ Մսըր կլինեմ...

Միերը նամակը կարդաց Գոհարին. Գոհարը սոսկաց.

- Մի՛ գնա, Միե՛ր,
Մի՛ ընկնի դու նենգ թակարդը նրա.
Ուզում է քեզնից զավակ ունենա,
Որ Մսրա գահին ժառանգորդ դառնա,
Միե՛ր, մի՛ գնա...

Նույն բանն ասաց նաև Դեղձուն-Ծամը. խնդրեցին նաև Թորոս Քեռին և Օհանը.

- Մի՛ թողնի քո տունն ու Սասունն անտեր,
Մի՛ գնա, Միե՛ր...
- Լաչա՞կը հապա...

Խոսք էր տվել նա և պետք է գնար...

Միերը երրորդ օրը ներկայացավ Իսմիլ խաթունին...

Իսմիլ խաթունը յոթ օր գինով պահեց Միերին: Ութերորդ օրը Միերն ասաց.

- էլ չեմ խմի քո գինին...
Ինձ խաբեցիր, ինձ կապեցիր կախարդանքով կանացի:
... Ինձ չես խաբի այսուհետ,
Իմ Գոհարի մի մազն անգամ չեմ փոխի քո գլխի հետ...

Հեծավ Միերն իր ձին ու սլացավ դեպ Սասուն:

Ուրախացավ Սասունն ամբողջ.

-Մսրա երկրից Միերն եկա՜վ, Միերը մե՛րն է էլի...

Ուրախացավ մայրը անչափ.

-Ներում է քեզ մայրդ, Միհ՛ր, Աստված
ինքն էլ կների...
-Իսկ նա՞... արդյոք կների՞ նա՝ իմ Գոհարը
աննման.
Չէ՞ որ, մա՛յր իմ, ամենից շատ վիրավորել
եմ նրա՛ն:

Միհրի՝ դառը զղջումով լի աղերսանքներից հետո սրտաբեկ ու վշտաբեկ Գոհարն էլ վերջապես ներեց նրան...

Անցնում էին տարիները, և գնալով ավելի բարգավաճում էր Սասունը հովանու տակ Միհրի... Բայց և ծերանում էր հետզհետե Սասնա Առյուծը հզոր, և մի ծանր վիշտ կեղեքում էր նրա սիրտը շարունակ. չպարգևեց Աստված իրեն մի որդի հարազատ: Մինչդեռ այնտեղ՝ Մսրա երկրում, օրեցօր հսկայանում էր իր արյունից սերված երկրորդ Մելիքն ահարկու.

-Վա՜յ քեզ, որդի՛դ Սանասարի, Միհ՛ր,
այդ ի՞նչ արիր դու...

Այդ վիշտն էր տանջում գիշեր ու զօր Առյուծ Միհրին, երբ մի օր հիասքանչ տեսիլ տեսավ. աղավնակերպ ավետաբերը հայտնեց նրան, որ կունենա մի զավակ՝

- Քեզնից հետո Սասնա պաշտպան քեզ
արժանի մի ժառանգ:
Բայց իմացի՛ր, ո՜վ ծերունի, հենց որ ծնն-
վեց քո որդին,
Այդ նույն օրը մեռնելու եք դու և կինդ
միասին:

Ուրախացան Գոհարն ու Միերը.

- Թեկուզ մեռնենք, ցավ չէ հիմա.
կապրենք անմեռ, հարատև,
Մեռնում է նա, ով չի թողնում գեթ
մի ժառանգ իր ետև...
Եվ երբ անցավ ինը ամիս, ինը օր,
Գոհարն ազատվեց
Ու Միերին մի գանգրահեր, կայտառ
կորյուն պարգևեց...
Մկրտեցին երեխային, դրին անունը
Դավիթ:
Ու նույն օրը մեռան Միերն ու իր
կինը միասին,
Ու որբ մնաց Դավիթը՝ դեռ մի
օրական նորածին...

Ճյուղ երրորդ

ԴԱՎԻԹ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Մի օրական նորածին Դավթին որդեգրեց իր հորեղբայր Օհանը, որ զավակ չուներ: Սասնա քաղաքում մի ծծմայր գտան, որը կաթից կտրելով իր ծծկեր զույգ երեխաներին՝ որդու նման կերակրեց մանուկ Դավթին և մայրական սիրով սեղմեց իր կրծքին:

Ուրիշները եթե տարով, Դավիթն օրով էր մեծանում. մի տարեկան դեռ չկար, բայց կաթով չէր կշտանում. հաց էր ուզում և մեկ հացը երկու բերան էր անում: Ծծմայրը, մի առավոտ մանուկ Դավթին շալակն առած, բերեց Օհանի մոտ.

- Օհա՛ն եղբայր, ներո՞ղ կլինես, չնեղանաս,
շա՞տ եմ խնդրում,
Դավթին ծծից պետք է կտրել, նա է՛լ
կրծքով չի կշտանում.
Հաց է ուտում օրը մի տաշտ, ճիշտ եմ
ասում, Շարան է նա,
Սրան հացի շտեմարան Շիրակ պետք է,
որ դիմանա:

Օհանը, քահ-քահ ծիծաղելով, շնորհակալություն հայտնեց ծծմորը, որ այդքան կերակրեց Առյուծ Միհրի որբին.

-Այսուհետև ե՛ս կպահեմ, Դավիթն հացով
թող զորանա,
Միհրի տան հացը շատ է, ուտի, ինչքան
ուզում է նա...

Դավիթը ծնված օրից ազատություն էր սիրում: Երբ բարուրում էին նրան և կապում՝ օրորոցում քնեցնելու համար, լալիս էր, ճչում և ձեռ ու ոտ շարժելով՝ կտրատում էր բարուր ու բինդ[1]: Օհանի կինը՝ Սառան, ստիպված անկողինը գցեց գետնին, որպեսզի առանց կապի ու բարուրի քնեցնելիս գետին չընկնի:

Այնուհետև Դավիթն այնպես՝ կուշտ ուտելուց հետո, անլաց
Քնում էր խոր, խաղաղ քնով, գետնի
վրա ազատ պառկած:

Կրակ ու բոց մի երեխա էր մանուկ Դավիթը: Խաղ էր անում արեգակի շողքերի հետ, որ երդիկից ընկնում էին ներս. մի օր ձեռքը այնքան զարկեց գետնին, որ մատներից արյուն հանեց: Երկանաքարը[2] խաղալիք էր նրա համար. երբ այն առավ ու գլորեց, գնաց կպավ կճուճներին, մեկեն հազար փշուր արեց: Օդում թռչող տեգը բռնեց, ետ շպրտեց...

Մի օր իր հոր գուրզը տեսնելով՝ «էս ի՞նչ խաղալու լավ բան է», - ասաց և երբ այն վերցրեց ու ետ գետին դրեց, Սասունը թնդաց թափից ահագին:

- Երկրաշարժ եղավ, - ամենքն ասացին:

Ժաժքի պատճառը երբ որ իմացան, այսպես ասացին մարդիկ Սասունում.

-Դավիթն իր հոր հսկա ուժն ունի...
-Դավիթ մեր ուժն է, մեր մեջքի թուրն է...
-Մեծանա՝ նա իր հորից էլ կանցնի...
-Դավիթը Սասնա փրկության դուռն է...

Մսրա Մելիքը երբ իմացավ, թե Առյուծաձև Միհրն էլ չկա, զորք հավաքեց և հարձակվեց Սասունի վրա: Ձենով Օհանն առաջ գալով

[1] բինդ - *բարուրի կապ, կարված կամ գործած լայնեզր կտոր*

[2] երկանաքար - *երկանքի քար, աղացաքար*

աղաչեց-պաղատեց Մելիքին, որ Սասունը սրի չտա՝ խոստանալով, որ միշտ հարկատու և հպատակ կլինեն նրան:

-Որ այդպես է, - Մելիքն ասաց՝ բարձրաց-
նելով սուրը մերկ,-
Սասունն ամբողջ թրիս տակով թող գան
անցնեն մեկ առ մեկ,
Որ ձեզանից ոչ ոք երբեք այսուհետև սիրտ
չանի՝
Մսրա հզոր թագավորի՝ Մելիքի դեմ սուր
հանի:

Սասնա երկրում բոլորը՝ ջահել, ծծկեր, ալևոր, եկան մեկ-մեկ ու գլխիկոր անցան Մելիքի թրի տակով՝բացի Դավթից.

-Չէ՛, ես Մսրա թագավորի առջև գլուխ չե՛մ
թեքի...

Մսրա մարդիկ Դավթի թևից բռնեցին, որ մոտ բերեն,Դավիթն այնպես թափ տվեց, որ նրանց շպրտեց դես ու դեն: Շպրտելիս ճկույթ մատը դիպավ մի քարի. դիպավ թե չէ, քարից կրակ թռավ ու դեռ կթռչի...

Այս տեսնելով՝ Մելիքն ուզեց սպանել անհնազանդ Դավթին, սակայն իր մարդիկ համոզեցին նրան, թե՝ դեռ մի մատ երեխա է, և դեռ կաթի հոտ է գալիս բերնից, թե՝ մարդկանց վրադ մի՛ խնդացնի. չարժե նա քո զայրույթին:

Մելիքն անսաց[1] մարդկանց խոսքին, զորքը քաշեց ու գնաց, և Սասունը այդ օրվանից Մսրա սրի տակ մնաց:

[1]**անսալ** - *լսել մեկի խոսքին, հնազանդվել*

Դավիթը բարի սիրտ ուներ, խարդախություն չէր սիրում: Դրա համար էլ, երբ ճան[1] խաղալիս խաբեցին իրեն ու բոլոր ճաները ձեռքից առան, բարկացավ Դավիթը, հոնքերը կիտեց և նրանցից մեկին այնպես ապտակեց, որ նրա վիզը ծուռ մնաց Դավթի ապտակից: Դավիթը մի լավ դաս տվեց նաև բոլոր այն տղաներին, որոնք, վրեժ լուծելու համար խոսքը մեկ արած, ուզեցին բռնել ու ծեծել իրեն:

Ծեծված երեխաների բողոքի վրա՝ Օհանն ու Սառան որոշեցին Դավթին մի գործի դնել:

- Դավի՛թ, ուզո՞ւմ ես գառնարած լինել:
- Ինչո՞ւ չեմ ուզի.
Շատ անուշ բան է լինել գառնարած:

Օհանը Դավթի համար գնեց պողպատե սոլեր[2], ծայրը պողպատե մի կոռ[3] էլ բերեց, Սառան էլ հացի մի մախաղ[4] կարեց, ու մանուկ Դավթին Սասնա քաղաքին գառնարած արին:

Սակայն մի օր իսկ չդիմացան պողպատե սոլերը. Դավիթը ժամանակ էլ չունեցավ հաց ուտելու. ընկած Սասնա սարերն ի վեր՝ ուլ ու գառին խառնեց աղվես, կուզ[5], նապաստակ և իրիկնամուտին, երբ քաղաք մտավ, ով մեկն ուներ, բերել էր երկու, ով երկուսն ուներ, բերել էր նա չորս: Ուրախացան սասունցիները, ու մի ողջ տարի Սասունն աշխարհին աղվեսի, կուզի մորթի էր ծախում:

Հորեղբայր Օհանը երբ տեսավ, որ «երկարականջ ուլերի» ետևից սար ու ձոր վազելուց սոլերը մաշվել էին, և պողպատե կոռն էլ՝ մի բուռ մնացել, Դավթին նախրորդ դարձրեց.

- Եզն ու կովերը խելոք են, որդի՛,
Նրանց ետևից շատ չես վազվզի:

Եվ Դավիթը դարձավ նախրապան: Ամբողջ օրը սարեսար, ձորեձոր ընկնելով՝ իրիկնամու-

[1] **ճան** - *կճղակավոր կենդանիների ծնկահոդի ոսկոր, որով երեխաները խաղում են*

[2] **սոլ** - *մաշիկ*
[3] **կոռ** - այստեղ՝ *կեռ ծայրով հովվական գավազան*
[4] **մախաղ** - *տոպրակ, պայուսակ*
[5] **կուզ** - *կզաքիսների ցեղին պատկանող թանկարժեք մորթով գիշակեր կենդանի*

տին այս անգամ էլ ինչքան գազան կար, հավաքեց բերեց՝ արջ, վագր ու վարազ, գայլ ու բորենի: Մեծ ու պստիկ սարսափահար փակվեցին տներում և խնդրեցին Օհանին, որ ուրիշ գործի դնի Դավթին: Դավիթը թե՝

- Մի՞թե, հորեղբա՛յր, վատ բան եմ արել.
Թե մեկն ունեին, երկուսն եմ բերել,
Թե տասն ունեին, արել եմ քսան...
Վախկոտնե՛ր,- ասաց մեր մանուկ հսկան,-
Ձեր նախիրը թող ուրիշը տանի,
Տա գազաններին, գելերոց1 անի,
Մնաք անտավար...
- Ո՜վ Տեր Աստված, - Օհանն ասաց, - ի՞նչ գործ գտնեմ ես էս խենթին...

[1] **գելերոց անել** - *գայլերի բաժին դրծնել*

Օհանը նստեց, նետ ու աղեղ շինեց, տվեց Դավթին, որ որս անի, դառնա որսկան:

Դավիթն առավ նետ ու աղեղը և թռավ սարերը Սասնա: Հասավ մի կորեկի արտ՝ մեջը անթիվ-անհամար ճնճղուկ ու լոր: Կանաչ արտը ոտնատակ տալով՝ որս էր անում, երբ անիծելով վրա հասավ ծնկակոտոր[2] մի պառավ.

- Մարդ չի ասում, թե դու ազիզ մեր Միերի որդին ես.
Միեր որ կար, ժողովրդի համար հայր էր ու պաշտպան,
Էդ դո՞ւ պիտի լինես, ա՛յ ծուռ, Սասնա երկրին պահապան...

[2] **ծնկակոտոր** - *ծերությունից ծնկները թուլացած*

Դավիթը պառավից իմացավ, որ Միերն ուներ նետ ու աղեղ, Ծովասարում՝ որսատեղ:

Դավիթն եկավ Օհանի մոտ ու ասաց.

-Ու՞ր է իմ հոր նետ - աղեղը, որ պահում ես ինձանից...
Այժմ էլ արի գնա՛նք, իմ հոր որսասա՛ղը ցույց տուր ինձ...

Տխրեց Օհանը. ո՞վ էր այդ բանն ասել Դավթին. որսասարի տերը Մելիքն էր հիմա. Միերի մահից հետո Մելիքն եկել էր, քանդել պատ, պարիսպ, ավերել անտառ: Սակայն Դավիթն այնքան թախանձեց հորեղբորը, որ նա համաձայնվեց նրան տանել Ծովասար՝ մտածելով, թե մեղք է տղան. հոր գերեզմանն էլ կտեսնի այնտեղ:

Հասան Ծովասար: Տեսավ Օհանը, և արտասուքով լցվեցին աչքերը: Նայեց Դավիթը հորեղբորը և այդ մի կաթիլ արցունքի մեջ տեսավ Սասնա վիշտը մեծ: Ինքն էլ լցվեց այդ մեծ վշտով, բայց իր լացը նա զսպեց ու երդվեց.

- Ես չեմ թողնի ավեր մնա անտառն Առյուծ Միերի...

Երեկո էր, սակայն Դավիթը չուզեց տուն վերադառնալ.

- Աստղերի հետ զրույց կանեմ, սիրտս նը-
րանց կբանամ:
Դու գնա՛ տուն, իսկ ես մնամ,սարի գիշե-
րը տեսնեմ:
- Չէ՞, կմնամ, - Օհանն ասաց, - ես քեզ
մենակ ո՞նց թողնեմ...

Գիշերն իջավ Ծովասարում...

Կեսգիշերին Դավիթը հանկարծ տեսավ, որ Սեղանասարի կատարին կանաչ-կարմիր բոց է վառվում: Մոտ գնաց. սարի վրա մարմար մի քար էր դրված. ճեղքված էր այն, և այդ ճեղքից էր բոցը բարձրանում:

Դավթի ձայնը ականջն ընկավ. Օհանն աչքերը բացեց, հասավ Դավթին և ծունկ չոքեց, քարը համբուրեց...

-Դավի՛թ, որդի՛ս, դո՛ւ էլ չոքիր, - ասաց և
ա՜խ քաշեց խոր.-
Մարմար քարը վրան քաշած՝ սա գերեզ-
մանն է քո հոր:
Միհրի մեծ վիշտն է ճեղքել տապանա-
քարն ահագին,
Ու էս կանաչ-կարմիր բոցը, որ հասնում է
երկնքին,
էդ Միհրի սիրտն է էդպես վառվում նրա
կրծքի տակ
էն օրվանից, որ Սասունը դարձավ Մսրա
հպատակ...
էն ավերակ վանքն էլ, որ կա, հայրդ էր
շինել, շենացրել
Ու անունը Մարութա Բարձր Աստվածա-
ծին էր դրել.
Իսկ երբ ի՛նքը Սասնա պաշտպան Առ-
յուծ Միհրը մեռավ,
Մսրա Մելիքն եկավ, քանդեց, վանքի քա-
րերն էլ տարավ...

Այս լսելով՝ Դավիթը երդվեց. վկա՝ աստղա-լից երկինքը, վկա՝ հոր սրտից ելնող կանաչ-կարմիր բոցը, որ չի իջնի Ծովասարից, մինչև շինել չտա վանքը նորից՝ պայծառ առաջվանից:

- Հիմքի փորելն էլ ի՛նձ վրա,
Հիմնաքարերն էլ՝ ի՛մ մեջքով.
Գմբեթի սուրբ խաչն էլ ոսկյա
Պիտի տնկեմ ես ի՛մ ձեռքով:

Դավիթը հորեղբայր Օհանից խնդրեց հինգհարյուրական մարդ՝ քար կտրող, քար տաշող, ջուր կրող, շաղախ անող ու ցեխ քաշող, պատ շարող, նաղաշ վարպետ, որ պատկեր քաշեն, վանքի ներսն ու դուրսը նախշեն:

Հորեղբայրն ընկավ ճամփա, գնաց դեպի Սասնա քաղաք:

Օհանն ելավ առավոտյան,
Աղոթքն արեց, կապեց վրան
Սև գոմեշի
Յոթ տակ կաշի,
Որ գոռալուց չպատռվի.
Կանգնեց Սասնա բարձր-անառիկ
Բերդի տանիք
Ու ձեն ձենեց Սասունով մեկ.
- Սասունցինե՜ր, հե՜յ, լսեցե՜ք.
Մարութա Բարձր Աստվածածնի
Վանքը նորից շինենք պիտի...
Կանչեց, եկան ինչքան կային,
Եկան, թիկունք եղան Դավթին...
Ու կանգնեցրին սարի ուսին
Ավերակված վանքը կրկին՝
Առաջվանից էլ փառահեղ,
Առաջվանից շեն ու շքեղ...

Լուրն անմիջապես հասավ Մելիքին, թե Դավիթը կրկին շինել է Մարութա վանքը, վերականգնել է որսասարի պատն ու պարիսպը, հոր նետ ու աղեղն առած՝ որս է անում որսասարում և դարձել է Սասնա իշխան:

Մռնչաց Մելիքը նենգ. անմիջապես հրաման արձակեց, որ Կոզբադինը, Բադին, Սյուդին ու Չարխադին առնեն հազար մարդ, գնան Սասուն, վանքն ավերեն ու տասը տարվա հարկը բերեն:

Հարկահանները, քառասուն-քառասուն կին ու աղջիկ և ոսկի ու ավար բերելու մեծ-մեծ խոստումներով, ուռած-փքված ճամփա ընկան դեպի Սասուն:

Արևն ասես թե խավարեց, իջավ գիշեր Սասնա վրա...

Վախկոտ Վերգոն և Ջենով Օհանը աղ ու հացով դիմավորեցին Կոզբադինին և հլու-հնազանդ ժամանակ խնդրեցին՝ չար Մելիքի հրամանը կատարելու:

Երբ Դավիթը երեկոյան, զարկած եղնիկն ուսին, ուրախ-զվարթ տուն էր վերադառնում, տեսավ, որ հաստագլուխ Կոզբադինը, Բադին, Սյուդին ու Չարխադին, աղջիկ ու կին, երինջ, եզներ, կարմիր ու կթան կովեր գոմ ու մարագ լցնելուց հետո, կոտ[1] առ կոտ իր հոր ոսկին էին չափում, իսկ Օհանը նրանց առաջ լուռ կանգնել էր՝ վիզը ծռած:

Դավիթն իսկույն ներս սլացավ, լի պարկերը դատարկեց, Կոզբադինի ձեռքից կոտն առավ ու ճակտին շպրտեց:

Չափը ճեղքեց ճաղատ գլուխն ու ծակելով պատը քար՝
Գնաց թափով, գնում է դեռ ու կգնա՜ դա-ռեդար...
Դարձավ ասաց Բադուն, Սյուդուն ու Չար-խադուն ահաբեկ.
-Կորե՛ք իսկույն ու մեր հողում ոտ չդնե՛ք էլ երբեք:

Ապա դարձավ տխուր կանգնած Օհանին.

- է՜, հորեղբա՛յր, մեր տունն էսպես շեղ-ջած[2] արծաթն ու ոսկին՝
Դու ինձ նախրորդ ու գառնարած էիր արել քաղաքին...
Մի՛ վախենա, - ասաց, - հորեղբա՛յր,
Գայլից որքան որ վախենաս, կգազազի նա այնքան:

[1]**կոտ** - *փայտե աման, որ իբրև չափ էր ծառայում հացահատիկի համար*

[2]**շեղջել** -*կույտ անել, դիզել*

Գայլը գամփռի հոտ որ առավ, չի մոտենա
նա հոտին.
Առյուծ ձևող Միեր չկա, բայց կա Առյուծ
հոր որդի՛ն:

. . . . . .

Սասնա հողում՝ դաշտի վրա, բանակ զար-կեց Մսրա արքան և մի վերջնագիր ուղարկեց Զենով Օհանին, թե՝ անհապաղ հարկն եմ ուզում և հարկի հետ՝ Դավթին ձեր խենթ: Եթե չտաք, կավերեմ ամբողջ Սասունը և սրի կքաշեմ մանուկ ու ծեր:

Թուքը բերնի մեջ չորացավ հորեղբայր Օհանի, բայց և ականջներին չհավատաց ու զայրացավ, երբ եղբայր Վերգոն, Վախկոտ Վերգոն ասաց նրան.

... - Տանենք Սասնա ամբողջ ոսկին,
Տանենք սիրուն աղջիկ ու կին,
Տանենք նաև մեր խենթ Դավթին.
Լավ է գայլին հանձնել մի գառ,
Քան թե ամբողջ հոտն ու հովվին:
- Դավթին ասի՞ր...
Ամո՛թ, Վերգո՛, հազա՞ր ամոթ, որդին ես
դու Սանասարի՞,
Հազա՞ր ափսոս, որ եղբայրն ես Առյուծա-
ձև քաջ Միերի...

Թորոս Քեռին էլ թուղթը կարդաց՝ կրակ կտրած:

- Չենք տա, - ասաց, - ոսկի, արծաթ
Ու ոչ էլ մեր Դավթին կտանք:
Կռիվ կուզի՝ կռիվ կանենք:

Ու ձայն տվեց Թորոս Քեռին.

- Հե՜յ, հե՜յ, լսե՜ք, սասունցիներ,
Մսրա դաժան նեռն1 է կրկին
Եկել չոքել Սասնա կրծքին,
Մեր Դավթին է ուզում ու մեր
Սասնա սիրուն աղջիկներին,
Դառը դատած Սասնա ոսկին...-
Կոչեց, կանչեց Թորոս Քեռին,
Ու նրա այդ կանչի վրա
Եկան՝ պաշտպան իրենց երկրի,
Ազատասեր քաջեր Սասնա...
Եկան՝ առած նետ ու աղեղ,
Մահակ ու բիր2, մանգաղ ու թի,
Եկան՝ առած մկունդ3 ու տեգ,
Շամփուր ու շիշ ու գերանդի,
Ու դեպի մարտ ձիով, ոտքով
Թռան Թորոս Քեռու հետքով:

[1] **նեռ** - *այստեղ՝ արյունարբու մարդ, գազան*
[2] **բիր** - *հաստ գավազան, մահակ*
[3] **մկունդ** - *մեծ գեղարդ, նիզակ*

Դավիթն այդ օրը շատ էր հոգնած. քեռու տանը քնել էր խոր. ամբողջ օրը վազվզել էր որսի ետևից սար ու ձոր, հանդիպել էր մի վարազի, վրան չոքած՝ խեղդել էր այն, շալակն առած՝ բերել էր տուն:

Հանկարծ արցունքի մի ծանր շիթ ընկավ Դավթի լայն ճակատին, և Դավիթն աչքերը բացեց. քեռակինն էր, որ լալիս էր Մելիքի դեմ կռիվ գնացած Թորոս Քեռու և Սասնա քաջերի համար.

-Կկոտորի բոլորին էլ Մսրա Մելիքն արնածարավ...

Այս որ լսեց Դավիթը, խիստ վիրավորվեց, որ Թորոս Քեռին, իրեն երեխայի տեղ դնելով, տանը քնած է թողել ու կռիվ գնացել: Նետ-

աղեղն առավ ու դուրս թռավ անմիջապես: Սակայն քեռակինը ձայն տվեց, թե՝ նետ-աղեղո՞վ, ոտքո՞վ կռիվ կգնան. Առյուծաձև Միհրն ուներ հրեղեն ձի, կուռ սաղավարտ, պողպատ գոտի, Խաչ Պատերազմի, Թուր Կայծակի: Գնա՛ Ձենով Օհանի մոտ. նա պահել է, ուզի՛ր, թող տա:

Վազեց Դավիթն Օհանի մոտ, հագավ-կապեց հոր զենքն ու զրահը, թամբեց ու նստեց ձին՝ Քուռկիկ Ձալալին: Մեծ ու պստիկ դուրս թափվելով՝

Երբոր տեսան Դավթին՝ նստած ձիու վրա ոսկեկար,
Ուրախացան, ասես ի՛նքը Սանասարն էր զինավառ,
Ասես Միհրն էր դուրս եկել, զարթնել խոր-ունկ իր քնից՝
Ազատելու Սասունը իր ոսոխների ճան-կերից...

Սպառազեն պատանին, իրեն շրջապատող բազմությանը նայելով, հուզված «մնաք բարով» մաղթեց Սասնա մայրերին, որոնք իրեն մայրություն են արել, վարդ աղջիկներին, որոնք իրեն քույրություն են արել, դուռ-դրացիներին, որոնք իրեն հաց ու ջուր են տվել, ազգ-բարեկամներին, որոնց սիրով լի՝ կռիվ է գնում ինքը:

Այն ժամանակ Սասնա կանայք և աղջիկները, Դավթին իրենց մեջն առնելով, սրտի ձայնով կերկերուն երգեցին, և սարերը այդ ջերմ երգին արձագանք տվեցին.

-Գնա՛, Դավի՛թ, Սասնա՛ դյուցազուն,
Դու բարո՞վ գնաս...

Հաղթե՞ս ոսոխին՝ թշնամուն մեր նենգ,
Ու փառքով դառնաս...
Օհանն էլ երգեց՝ արցունքն աչքերին.
-Ափսո՞ս, հազա՞ր ափսոս, մեր թառլան
Դավթին՝ Հազարան հավքին,
Որ թռավ գնաց, գնաց մեր ձեռքից
Ու էլ չի դառնա, չի դառնա նորից...

Դավիթը, ձիուց ցած գցելով իրեն, համբուրեց հորեղբոր ձեռքն ու ասաց.

- Մնաս բարո՞վ, հորեղբա՛յր,
Հերություն ես արել ինձ,
Որբ եմ եղել աշխարհում,
Տերություն ես արել ինձ:
Քսան տարի գրկիդ մեջ՝
Որդու պես ես պահել ինձ,
Մնաս բարո՞վ, հորեղբա՛յր,
Իմ հերահո՛տ հորեղբայր...

Ապա հեծնելով ձին՝ Դավիթը խթանեց նրան ու թռավ հասավ Ծովասար՝ հոր գերեզմանին այցելության, որպեսզի հայրն էլ օրհնի իր թուրը, որ որդին բռնակալ Մելիքի դեմ հաղթանակ տանի ու նրան դուրս քշի Սասնա հողից, որպեսզի բոց չելնի հոր սրտից, ու Մարութա Աստվածածնի զանգերը միշտ ղողանջեն: Ապա նա կուշտ ջուր խմեց հայրենի պաղ աղբյուրից պապակ սրտով և ինքն իր վրա զարմացավ՝ զգալով, որ նոր ուժ ստացավ ու հսկայացավ: Դավիթը հրաժեշտ տվեց նաև Սասնա սարերին, զով հովերին, հայրենի ջրերին, նախշուն հավքերին, ծաղիկ-ծաղկունքին և խնդրելով, որ զորավիգ լինեն իրեն Մելիքի հետ կռվում, Դավիթն իր նժույգով հողմի նման

սուրաց, հասավ կանգնեց Սեղանասարի բարձունքին:

Երբ Դավիթը նայեց ներքև ու տեսավ, որ դաշտում փռված Մելիքի զորքին թիվ չկար, սոսկաց մի պահ: Ձին, զգալով, որ իր տիրոջ սիրտը դողաց երկյուղից, լեզու առնելով ասաց Դավթին, թե չվախենա, իշխի իրեն, պինդ մնա թամբի վրա և քաղցր խոսքերից չխաբվի, որպեսզի դավից չկորչի.

Այդ դեպքում՝ ինչքան դու քո բազկո՛վ զարկես,
Այնքան՝ ես իմ ոտքո՛վ, Դավի՛թ,
Ինչքան դու քո սրո՛վ խարկես,
Այնքան՝ ես իմ շնչո՛վ, Դավի՛թ:

Սրտապնդվելով նժույգի խոսքերից՝ Դավիթը Սեղանասարի կատարից ձայն տվեց Մսրա զորքին, որ արթնանան խոր քնից, զենք կապեն, ձի թամբեն, որ չասեն,

Թե Դավիթը սուրն անխնա
Քաշեց քնած զորքի վրա...

Ապա Թուր Կայծակին դուրս քաշելով պատյանից՝ սլացավ դեպի Մսրա բանակը: Այդ նույն ժամին Թորոս Քեռին էլ վրա հասավ, և Մսրա զորքը ջարդվում էր՝ երկու կրակի մեջ ընկած:

Այն ժամանակ Մսրա զորքից, ճեղքելով ծովն արյունի,
Եկավ կանգնեց Դավթի առաջ մի ալևոր ծերունի:
- Դավի՛թ,- ասաց, - զսպի՛ր մի պահ քո բարկությունն ահագին

Եվ լսի՛ր ինձ, ակա՛նջ արա ալևորիս խոս-
քերին:
Ի՞նչ են արել քեզ այս մարդիկ, որ կոտո-
րում ես էդպես,
Ամեն մեկը մի տան ճրագ, մի տան սյուն
է հենց քեզ պես...
Խեղճ մարդիկ ենք՝ կյանքի կարոտ, է՞ր[1] ես
ջարդում անխնա,
Թագավորն է քո թշնամին, կռիվ նրա՛ հետ
արա.
Նա է պոկել տնից-տեղից ու բերել է մեզ
բռնի,
Տվել էստեղ սրի բերան. զինվորը ի՞նչ
մեղք ունի...
-Ճիշտ ես ասում դու, ծերունի՛, հավան եմ
քո խոսքերին,
Բայց թագավորն ո՞ւր է, ասա՛, որ սև բերեմ
իր օրին:
- Մելիքն, - ասին, - քնած է խոր, յոթ օր
պիտի նա քնի.
Երեք օր է քնել նա դեռ, չորս օր էլ կա՝
քունն առնի:
- Քնել-մնել չեմ հասկանում, - գոռաց
Դավիթն ահարկու, -
Շուտ վե՛ր հանեք, կռի՛վ անենք. եկել եմ
ես կռվելու:
Բերել է խեղճ ժողովրդին տվել բերանը
սրի,
Ինքը պառկել, հանգիստ քնել հովանու
տակ վրանի:
Վե՛ր հանեք շուտ, ասում եմ ձեզ, թող
գա Մելիքը մեյդան[2],
Նրան էնպես քնեցնեմ ես, որ չզարթնի
հավիտյան...

[1] **Է՞ր** - *ինչո՞ւ*

[2] **մեյդան** - *հրապարակ, ասպարեզ*

Շիկացած շամփուրը դրին ոտքերի տակ, գութանի շիկացած խոփը՝ թիկունքին, մինչև որ արթնացրին Մելիքին: Երբ Մելիքը բացեց աչքերն ու իր դիմաց տեսավ հսկա Դավթին՝ հեծած իր ձին, արյունոտ թուրը բռնած ձեռքին, սոսկաց վախից և կեղծ ժպիտը դեմքին՝ խորամանկեց. առաջարկեց հանգստանալ. գուցեև չկռվեն ու գժտությունը իրենց միջև խաղաղությամբ ավարտեն:

Դավիթը ջինջ, անհիշաչար մանուկ էր
դեռ միամիտ,
Սիրտը զուլալ՝ իր հայրենի աղբյուրների
պես վճիտ,
Հոգին՝ դավին, խարդավանքին բոլորովին
անծանոթ...
Ի՜նչ իմանար՝ Մելիքը նենգ իր դեմ դարան
է լարում,
Ի՜նչ իմանար՝ քառասուն գազ հոր է փորել
վրանում,
Բարակ ցանցով ու գորգերով ծածկել բե-
րանը հորի...

Նժույգն իզուր ծառս եղավ, սակայն Դավիթն իջավ ձիուց, գնաց նստեց Մելիքի դեմ՝ գորգի վրա, ու... հորն ընկավ:

Խնդաց քահ-քահ Մելիքը նենգ ու հորի վրա մի ահագին ջաղացքար դնել տվեց և երբ մարդիկ ուղարկեց, որ իսկույն բռնեն նժույգը նրա, ձին արդեն Սեղանասարում դոփում էր հողը Սասնա...

Այդ գիշեր հորեղբայր Օհանը սոսկալի երազ տեսավ. առաջին անգամ տեսավ՝ Մսրա երկինքը պարզ, Սասնա երկինքը՝ ամպամած, երկրորդ անգամ տեսավ՝ Մսրա աստղը պայծառ, Սասնա աստղը՝նվաղած, երրորդ անգամ երազ տեսավ և ավելի սոսկալի.

Տեսավ՝ Մսրա աստղը պայծառ շողաց
երկնի կամարում,
Սասնա աստղը ցոլաց, ընկավ, հանգավ
անծայր խավարում:

Օհանը վեր թռավ տեղից, գոմից դուրս հանեց իր սև ձին, մի ոտքը դրեց ասպանդակին, մինչև մյուս ոտքն էլ դներ, ձին հասցրեց նրան Սեղանասար:

Օհանն այնտեղ տեսավ Քուռկիկ Ձալալին՝ անտեր, սադափյա թամբը՝ թափուր:

- Հե՜յ, վա՜խ, - հառաչեց, - Դավիթը չկա՜...

Օհանը յոթ տակ գոմեշի կաշի փաթաթեց մարմնին, որ չպատռվի, ու կանգնելով մի բարձր ժայռի վրա՝ գոռաց իր ամբողջ ձայնով վիթխարի.

- Դավի՜թ, հե՜յ, Դավի՜թ, որտե՞ղ ես, Դավի՜թ,
Հիշի՛ր Մարութա Բարձր Աստվածածին,
Խաչ Պատերազմի՛ն հիշիր աջ թևիդ,
Թա՛փ տուր քեզ ու զա՛րկ քո Թուր Կայ-
ծակին...

Օհանի ձայնը հասավ Դավթին. Դավիթը աղոթքն արեց ու գոտեպնդված՝ իր հսկայական թրով զարկեց, ջաղացքարն արեց քառասուն կտոր, հորից ցասկոտ դուրս ելնելով՝ թռավ դեպի Սեղանասար:

- Դավի՜թ ջան, Դավի՜թ...
- Անո՜ւշ հորեղբայր...
Գրկեցին միմյանց, ողջագուրվեցին:
Եվ ապա, ինչպես երկվորյակ եղբայր,
Իրար փարվեցին Դավիթն ու իր ձին:
- Է՜լ չի խաբի ինձ Մսրա սատանան,
Է՜լ չի դավի ինձ դևը դավադիր:
Գնում եմ հիմա, որ զարկեմ նրան:

. . . . . .

- Մելի՛ք, - գոռաց, - դու՛ռս արի շուտ, կռի՛վ անենք, զարկե՛նք իրար...

Սարսափը պատեց դև Մելիքին, և նա փորձեց նորից խաբել Դավթին: Իսկ Դավիթը՝

- Չե՛մ նստի ես քո սեղանին,
Քեզ հետ, Մելի՛ք, հաց չե՛մ կիսի,
Չե՞ս կարող ինձ խաբել կրկին
Այդ խոսքերով քո աղվեսի...

Մելիքը ճարահատ հեծավ իր ձին, գուրզը առավ, եկավ կանգնեց Դավթի դիմաց.

- Բայց առաջ ո՞վ պիտի զարկի, վիճակ գցենք, եթե կուզես:
- Վիճակն ի՞նչ է, առաջ դո՛ւ զարկ, դու տարիքով ինձնից մեծ ես...

Ամեն մեկին երեք զարկ էր հասնում: Առաջին զարկին Մելիքն իր ձին ասպանդակեց, քշեց հասավ մինչև Ծամ ու Հալաբ ու սրարշավ գա-լով թափով՝ հսկայական գուրզը զարկեց: Երբ թնդյունով ընկավ գետին, հողը հերկեց գութանի պես, ու դաշտով մեկ կանգնեց փոշին:

- Կորա՞վ Դավիթն այս մեկ զարկով, - խընդաց Մելիքն ամբարտավան:
- Կենդանի՞ եմ, մե՛կ էլ արի, - գոռաց Դավիթն ամպի նման:

Երկրորդ անգամ Մելիքը քշեց գնաց մինչև Բաղդադ ու Բաղդադից գալով՝ թափով գուրզը շպրտեց:

- Հող էր Դավիթն ու հող դարձավ, - Մելիքն ասաց...
- Կենդանի՞ եմ, մե՛կ էլ արի ու զա՛րկ դու քո զարկը վերջին...

Երրորդ անգամ Մելիքը քշեց իր ձին, գնաց մինչև Մուսուլ հասավ ու Մուսուլից մրրկարշավ եկավ զարկեց զարկն իր վերջին: Գուրզը հերկեց դաշտը, խրվեց գետին, նրա քամին հսկա ժայռեր գլորեց ցած, ու Աղթամար ծովի վրա մեծ փոթորիկ բարձրացավ: Երեք գիշեր, երեք ցերեկ փոշին կանգնեց ամպի նման: Երեք օրը երբ լրացավ, ու փարատվեց ամպը փոշու,

Կանգնեց Դավիթն արձակ դաշտում՝
ամուր գրկած վիզն իր ձիու:
- Հերթը հիմա ի՛մն է, Մելի՛ք, կանգնի՛ր, -
կանչեց Դավիթ հսկան...
- Քոնն է, միայն խնդրում եմ քեզ, տո՛ւր
ինձ երեք ժամ ժամանակ...
- Տվի՛, գնա՛, - Դավիթն ասաց՝ ծիծաղելով
իր քթի տակ...

Մելիքը քառասուն գազ խորությամբ մի փոս փորել տվեց, մեջը մտավ, վրան քաշեց քսան վերմակ ու քառասուն գոմշի կաշի ու քառասուն ջաղացքար.

- Դե թող հիմա սուրն իր քաշի...

Դավիթը հեծավ իր հրեղեն ձին ու երբ քաշելով Թուր Կայծակին՝ թափով առաջ եկավ, Մելիքի մայրը, մազերն արձակ, ելավ Դավթի ձիու առաջ.

- Մա՜յր եմ, Դավի՛թ, էդ զարկդ ի՛նձ բաշ-
խիր, - ասաց լալահառաչ...
Դավիթը, սուրը համբուրելով, դրեց ճակ-
տին:
- Գնա՛, - ասաց, - Իսմի՛լ խաթուն, քե՛զ բաշ-
խեցի զարկն առաջին...

Երկրորդ զարկին՝ Մելիքի կինն առաջ
եկավ արտասվալից.
- Աղաչո՜ւմ եմ, դու քո երկրորդ զարկը, Դա-
վի՛թ, զարկ ի՛մ սրտին...
Երկրորդ զարկն էլ բաշխեց կնոջը Մելիքի:
- Մնաց մի զարկ ու մի Աստված, - ասաց
Դավիթն ու գնաց հասավ Ծծմակաքիթ,
ապա եկավ թափով՝ որոտալով.
- Ո՜վ Մարութա Աստվածածին,
Քեզ եմ կանչել, դու օգնակա՛ն ու զորավի՛գ
եղիր Դավթին,
Դու՛ էլ, իմ Խա՛չ Պատերազմի, բազմա-
պատկի՛ր ուժն իմ բազկի:

Փայլատակեց Թուր Կայծակին, իջավ թափով, կտրեց քառասուն ջաղացքարն ու քառասուն գոմշի կաշին, զարկեց քսան վերմակն անցավ, կտրեց-կիսեց նենգ Մելիքին ու յոթ գազ էլ այն կողմ գնաց:

- Կենդանի՜ եմ, մե՛կ էլ արի, - Մելիքն հորի
միջից գոռաց:
- Չե՜մ հավատում, - Դավիթն ասաց. - Մե-
լի՛ք, թա՛փ տուր մի քեզ...
Մելիքը թափ տվեց իրեն, մեջքից եղավ
ճիշտ երկու կես...
- Տեսե՛ք ահա ու ցնծացե՛ք, Առյո՛ւծ Միեր
ու Սանասա՛ր,-
Ասաց, հասավ Թորոս Քեռին, գրկեց քա-
ջին.
- Կեցցե՜ս, Դավի՛թ, անմահ փառքով պսա-
կեցիր քեզ հավիտյան...

Մելիքի մայրը՝ Իսմիլ խաթունը, այս որ տեսավ, փետեց մազերն ու սուգ արեց: Եվ ողբալուց երբ դադարեց, խնդրեց Դավթին, որ թափուր չթողնի Մելիքի գահը. ամուսնանա իր հարսի հետ ու թագավորի Մսրա վրա:

Խնդաց Դավիթն ու մերժեց Իսմիլ խաթունի առաջարկը.

- Վաթանի1 փուշն անուշ է, քան օտար
երկրի վարդը սիրուն.
Պահել եմ ես սիրտս հայոց աղջիկների
զուլալ սիրուն.
Ո՛չ Մելիքի հողն է ինձ պետք, ո՛չ էլ չքնաղ
իր թագուհին.
Ես աչք չունեմ Մսրա գահին...

[1] **Վաթան** - *հայրենիք*

Ապա դառնալով Մսրա զինվորներին՝ Դավիթն ասաց, որ վերադառնան իրենց երկիրը և այլևս ոտք չդնեն Սասնա հողին: Ձենքի փոխարեն մանգաղ առնեն, մուրճ, արոր, մաճ և խաղաղ աշխատանք անեն:

Եվ զորքն ամբողջ, շրջապատած Սաս-
նա Դավթին,
-Հազա՞ր ապրի Դավիթն անհաղթ,-
միաբերան որոտացին
Ու թափելով Սասնա հողում իրենց
բոլոր զենք ու զեն՝
Ճամփա ընկան անմիջապես, դեպի
Մսըր դարձան նորեն:
Իսկ Դավիթն ու Թորոս Քեռին, հաղթա-
նակի խինդով լեցուն,
Քաջերի հետ հպարտ ու վես վերա-
դարձան դեպի Սասուն:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Սասնա Դավթի համբավը գնաց հասավ մինչև Կապուտկող՝Կապուտբերդի թագավորի աղջկա՝ Խանդութ խաթունի ականջը, չնաշխարհիկ, չքնաղ մի աղջիկ՝դեռ տասնութ տարեկան:

Քունը փախավ Խանդութ խաթունի աչքերից: Եվ նա իր մոտ կանչեց հայր ու որդի երկու անվանի գուսանների, որ գնան Սասուն, իր գովքն անեն Սասունցի Դավթի մոտ և կրակոտ սիրո երգերով նրա սրտում սեր գցեն իր հանդեպ:

Հայր ու որդի, սազերն իրենց ուսերին, գնացին հասան Սասուն: Դավիթն իր հարկի տակ սեղան-սուփրա[1] բացեց և հյուրասիրեց գուսաններին: Ապա հայր ու որդի, իրենք էլ հմայված Դավթի սրտաբաց հյուրասիրությամբ ու գեղեցկությամբ, ոգևորված ու խանդավառ, գովքն արեցին Խանդութ խաթունի հասակի, աչքերի, թարթիչների, հոնքերի, ճակատի, մազերի, բերանի, ատամների, այտերի, շուրթերի...

[1] **սուփրա** - *սփռոց*

Ձինջ է, ինչպես լուսաբացի
Ցողը վարդի թերթի վրա:
Արի՛, Դավի՛թ, ու տիրացի՛ր,
Տիրի՛ր նրան, քո բախտն է նա...

Դավիթը տարված լսում էր նրանց, և հոր ու պատանու շուրթերից թռած ամեն մի բառ հրդեհ էր վառում նրա կրծքի տակ: Նրա անարատ ու զուլալ, Սասնա բերդի նման անխախտ սիրտը պղտորվեց ու հիմքից քանդվեց.

- Գնացե՛ք, ինձնից շատ բարև՜ տարեք,
Շատ բարև՜ տարեք Խանդութ խաթունին,
Երբ անցնի բարով վեց օրն, ասացե՛ք,
Յոթերորդ օրը սպասի Դավթին:

Յոթերորդ օրը Դավիթը, հեծած իր Քուռկիկ Ջալալին, ճամփա ընկավ դեպի Կապուտբերդ: Ճանապարհին Դավիթը հանդիպեց մաճկալների, իր ձիուն կապած յոթ գութաններով օգնեց՝ լայնատարած դաշտը երկու ժամում հերկելու: Ապա մի գիշեր հյուր եղավ սիրավառ մանկամարդ Չմշկիկ Սուլթանին՝ խոցվելով նրա այն խոսքից, թե քաջ Դավիթը մի կնոջից վախեցավ: Գիշեր էր, գինին՝թունդ, և Դավիթը խաբվեց: Շատ խնդրեց Չմշկիկ Սուլթանը, որ մնա իր մոտ, մոռանա Խանդութ խաթունին, սակայն Դավիթը հեծավ իր ձին և սրտի վրա ծանր մի քար՝ ճամփա ընկավ դեպի իր սերը՝ Խանդութը չքնաղ:

-Դե լա՛վ, դու իմ գլխին վա՜յ տաս, - ասաց
Սուլթանը, - եթե ես
Թողնեմ, որ դու, Դավի՛թ տղա, քո Խան-
դութին վայելե՜ս...

Յոթերորդ օրը երեկո էր արդեն, բայց Դավիթը դեռ չկար:

Խանդութը, ամրոցի պատշգամբում աչքը ճամփին մեն-մենակ նստած, սիրակարոտ սպասում էր, երբ հեռվում նկատեց մի ձիավոր, որ քառասմբակ գալիս էր. Դավիթն էր: Եվ երբ ամրոցի դեմ հանդիման կանգ առավ ու տեսավ Խանդութին, հիացմունքից քար կտրեց:

Խանդութն ինքն էլ, մի պահ դյութված,
նայեց Դավթին անանման,

Ապա զարկեց ձեռքում պահած կարմիր
խնձորը նրան:

Նետեց Խանդութն իր խնձորը և չքացավ: Դարպասապահ Գորգիզը Դավթի առաջ բացեց պարսպի դարպասները, որոնք յոթ տարիներից ի վեր փակ էին Խանդութի ձեռքը խնդրող յոթ հսկաների առաջ:

Յոթ հսկաները այդ տեսնելով սև նախանձով լցվեցին ու որոշեցին մի հնարքով նենգաբար սպանել Սասնա Դավթին և Խանդութի՝ նրան տված խնձորը ետ առնել: Նրանք ճոխ սուփրա բացին, սրերը պահեցին սուփրի տակ, հարբեցրին Դավթին յոթ տարվա գինիով և այն է՝ պիտի սպանեին Դավթին, երբ մեկուսի կանգնած Գորգիզի գոռոցի վրա Դավիթն սթափվեց: Հավաքելով բոլոր սրերը՝ մի խուրձ արավ, զարկեց ծնկանն ու կոտրտեց: Հսկաներն ամոթահար վեր կացան, հեծան ձիերն ու գիշերով Կապուտկողից հեռացան:

Դավթի քաջագործությունների ու Խանդութ խաթունի հետ նշանադրության լուրը հասավ պարսից Շապուհ արքայի ականջը:

- Դավիթն ո՞վ է, որ ուրուրի սուր ճանկերից
լոր տանի:
Ամեն լավ բան պետք է միայն Շապուհ
շահին պատկանի, -
Ասաց պարսից գոռոզ արքան, ֆշշաց,
ինչպես վիշապ օձ,
Ու զորք կապեց, եկավ զորքով, մտավ աշ-
խարհը Հայոց.
Գալար-գալար՝ Կապուտբերդի պարիսպ-
ներին փաթաթվեց
Ու Վաչագան թագավորի մոտ սուրհան-
դակ ուղարկեց.

«Կտաս կամքով՝ տու՛ր Խանդութին, չէ՝
երկիրդ կավերեմ...»:

Խռովվեց Խանդութի հոգին, սակայն և անձամբ ինքը թամբեց Քուռկիկ Ձալալին: Երբ Դավիթը հեծավ իր հրեղեն ձին, պատվեր տվեց Խանդութին.

- Երեք օրից ետ թե եկա՝ եկա,
Թե որ ետ չեկա, ուրեմն իմացի՛ր,
Որ Դավիթն այլևս աշխարհում չկա:
Կգա՛ս, կփնտրե՛ս ինձ կռվի տեղում,
Ընկածների մեջ կգտնե՛ս իմ դին...
Իսկ նշանն, ահա՛, լա՛վ նայիր և տե՛ս՝
Աջ թևիս վրա Խաչ Պատերազմին...

...Քա՛հ-քա՛հ ծիծաղեց գոռոզ արքան, երբ տեսավ, որ ծուռ ու խենթ սասունցին եկել է՝մենմենակ կռվելու պարսից բազմաթիվ բանակի դեմ: Սակայն Դավիթը մինչև իրիկուն պարսից զորքի մեջքը կոտրեց: Նենգ Շապուհը մտածեց, որ Դավիթը եթե հաղթվի, միմիայն իր քաջ ազգակցից կհաղթվի, գաղտնի մարդ ուղարկեց Սասուն՝ Ձենով Օհանի մոտ.

«Իմացել ենք՝ ձեր քաղաքում ունեք դուք
շատ փահլևաններ1,
Որոնք հսկա ուժի տեր են ու կոչվում են
Սասնա ծռեր:
Ուղարկեցե՛ք մեկին, թող գա. այստեղ
ունենք մի փահլևան.
Եթե հաղթի այդ կտրիճին, ես յոթ քաղաք
կտամ նրան»:

[1]**փահլևան** - *լարախաղաց. այստեղ՝ուժեղ, քաջ ու հաղթանդամ մարդ*

Վախկոտ Վերգոն մի կտրիճ տղա ուներ՝ անունը Աստղիկ: Երբ լսեց յոթ քաղաքի անունը, հեծավ իր ձին ու թռավ հասավ Շապուհի կռվին:

Երկու հսկա լեռներ կանգնեցին իրար դիմաց. Դավիթը շատ էր փոխվել, և Աստղիկը չճանաչեց Դավթին, մինչդեռ Դավիթը ճանաչեց իր արյունակից հարազատին: Սակայն կռվի թեժ պահին աչքերի դեմ մութը պատեց, սուրը քաշեց, և Աստղիկը արնաշաղախ գետին փռվեց ու հորեղբորորդու գրկում հոգին տվեց:

Դավթի ուշքը գնաց, ընկավ: Այդ ժամանակ Քուռկիկ Ձալալին, սարի նման կանգնելով իր տիրոջ գլխավերևում, Դավթի վրա հասած պարսից զորքից շատ-շատերին գետին փռեց իր պողպատապայտ սմբակներով, մինչև Դավիթն ուշքի եկավ: Եվ սրարշավ հասնելով գլխապատառ փախչող անամոթ Ծապուհին՝ զարկեց սրով, ցած բերեց ձիուց և իր ձիով սարի նման ելավ կանգնեց նրա փորին...

Արդեն իջնում էր խաղաղ գիշերը. Դավիթը փնտրեց գտավ Աստղիկի արնաշաղախ դին, իր ձեռքերով խորունկ մի գերեզման փորեց, թաղեց այնտեղ իր արյունակից հարազատին և հողաթմբի վրա ընկած՝ մինչև լուսաբաց սրտամորմոք լաց եղավ...

Անցան ահա երեք օրերը, ու Դավիթը դեռ չկար: Կսկիծն առավ Խանդութին: Ելավ Խանդութը, ձիավորվեց զինավառ և, պատվերի համաձայն, գնաց կռվի դաշտ՝ Դավթի մարմինը գտնելու:

Արտասուքն աչքերին՝Խանդութը փնտրում էր իր քաջին: Աստղիկի շիրմին նստած Դավիթն իսկույն ճանաչեց Խանդութին, մինչդեռ Խանդութը խոր վշտի մեջ չճանաչեց իր Դավթին: Հուզվեց Դավիթն իր Խանդութի ջերմ սիրուց: Բայց և այնպես իր վշտի մեջ անգամ Դավիթն ուզեց փորձել Խանդութի հավատարմությունն ու սերը իր նկատմամբ:

- Լռի՛ր, վախկո՛տ դու վատոգի՛,- պատաս-
խանեց անվեհեր,-
Քաջը, որին փնտրում եմ ես, հազար ան-
գամ քեզ արժեր...

Քիչ անց, սակայն, ամեն ինչ պարզ դարձավ, ու երկուսով սիրագորով իրար գրկած՝ հեծան ձիերն ու հասան Կապուտբերդ:

Ծերունազարդ Վաչագան թագավորը ցնծագին դիմավորեց իր աղջկան ու փեսային, օրհնեց նրանց: Երեք օր երեք գիշեր երգ ու պարով ուրախացան, իսկ չորրորդ օրը՝ առավոտյան, Խանդութն ու Դավիթը ուրախ-զվարթ հեծան իրենց ձիերն ու Կապուտբերդից ճամփա ընկան դեպի Սասնա տուն:

Երբ ձիավոր զույգն անցնում էր Խլաթա բերդի տակով, Չմշկիկ Սուլթանը, որ ոխը սրտում՝ Դավթի ետ գալու ճամփան էր պահում, կանգնեց Դավթի դեմ ու ճամփան փակեց: Նորից ու նորից մերժում ստանալով՝ խանդից վառված Չմշկիկը թնդաց հանկարծ.

- Իջի՛ր ձիուցդ, կռվե՛նք ես ու դու...
- ...Բայց կին կա հետս,
Թո՛ղ, տուն հասցնեմ նրան ու դառնամ...

Սակայն երբ Սուլթանը չհավատաց, որ կվերադառնա, Դավիթն ասաց.

- Երդվում եմ թևիս Խաչ Պատերազմով,
Որ յոթ օր հետո այստեղ լինեմ ես...

Միայն այդ ժամանակ է որ Չմշկիկը, բաց թողնելով ձիու սանձը, ետ դարձավ գնաց՝ լի վրեժով, ոխով կանացի:

Սասնա քաղաքը բովանդակ՝ մեծ ու պըստիկ, դուրս թափվեցին՝ նորապսակներին դիմավորելու:

Երբ Դավթի հետ սպառազեն, նրա ձիուն
զուգընթաց,
Նստած աշխետ ձիու վրա՝ շքեղորեն
զարդարված,
Տեսան նրա նորահարսին, ասես արևը
ծագեց,
Ամեն բերան հիացմունքի մի անզուսպ
ճիչ արձակեց...
Օհանն ուրախ դիմավորեց զույգին հացով,
գինիով,
Եկավ Թորոս Քեռին աշխույժ, նրանց
առաջ պարելով՝
Եկան կանայք և աղջիկներ, բերին
սեղան ու սինի...
Գովքն արեցին կտրիճ Դավթի և գեղեցիկ
Խանդութի...

Եկավ նաև Օհանի կին Սառան և երկու լավաշ ձեռքին՝հարազատ մոր պես օրհնեց նրանց:

Յոթ ցերեկ ու յոթ գիշեր թնդաց թմբուկը, պար բռնեցին բոլորակի, կերան-խմեցին՝ երկար կյանք մաղթելով իրենց Դավթին ու Խանդութին:

Երջանիկ էին Դավիթն ու Խանդութը: Սակայն Դավթին հանգիստ չէին տալիս Խանդութի ձեռքը խնդրող յոթ քաջերը, որոնց՝ Խանդութի սիրուն ծարավ էր թողել ինքը: Եվ խիղճը հանգըստացնելու համար որոշեց գտնել յոթ քաջերին, տանել Գյուրջիստան[1] ու նրանց ամուսնացնել գյուրջի աղջիկների հետ, որոնց գեղեցկության համբավը տարածվել էր ամենուր:

[1]**Գյուրջիստան** - *Վրաստան*

- Դավի՛թ, տո՛ ծու՛ռ, - Խանդութն ասաց, -
էդ քո սիրտը ի՞նչ սիրտ է,
Նրանց ստոր դավը քո դեմ մոռացե՞լ ես
դու միթե...

Շատ աղաչեց Խանդութը, որ Դավիթը չգնար. ոտքերը ծանր էին, օրերը՝ մոտ: Սակայն անկոտրում մնաց Դավիթը. գիշեր-ցերեկ, արթմնի թե երազում, յոթ քաջերի սրտակտուր սիրականչն էր նա լսում: Հրաժեշտի պահին Դավիթն ասաց.

-Խանդո՛ւթ, թե տա Աստված, տղա բերես դու բարով,
Կորյուն որդուս կանչի՛ր Միեր՝ Առյուծ իմ հոր անունով...

Գնաց Դավիթը: Դավթի գնալուց որոշ ժամանակ անց Խանդութը լույս աշխարհ բերեց արու մի կորյուն՝ հաղթ, քաջածին, կուռ ու կայտառ մի տղա, որը խնդությամբ լցրեց ամբողջ Սասունը:

Թորոս Քեռին մանկան բարուրը գետնից հազիվհազ կտրեց. բինդերի տեղ բարուրը գութանի ծանր շղթայով կապկպեցին, որը տղան, ճչալով, ձեռն ու ոտը ճկելով, օղակ-օղակ կտրատելով, դեն նետեց:

Ծիծաղեցին ուրախացած ավագները Սասնա տան.
-Միերի թոռն է, - ասացին, - Դավթի որդին իսկական...
Մկրտեցին նորածնունդ մանկանը հուր-հրահեր
Ու որպես հուշ Առյուծ պապի՝ դրին անունը Միեր:

Միեր մի ասա, մի զարմանք ասա. հասակ էր առնում օր օրվա վրա. երեք տարեկան հազիվ լիներ նա, թողած խաղ ու խաղընկեր, շրջում էր Սասնա սարերը, ժայռից ժայռ

թռչում քարայծի նման, դիտում էր՝ եղնիկն ինչպես էր փախչում, արծիվների ջուն... Ամեն, ամեն ինչ լցվում էր նրա հոգին մանկական. և այսպես՝ Սասնա սարերում ազատ հասակ էր առնում մեր մանուկ հսկան:

- Հոր կտորն է... - ասում էր մայրն ու զըր-
կում էր Միհրին,-
Դավի՛թ, ո՞ւր ես, արի մի տե՛ս, քեզ է հասել
քո որդին...

... Մինչ Միհրն աճում էր ժամով, մեծանում օրով, Դավիթը, քաղաքից քաղաք, հողից հող ման գալով, գտավ Խանդութի ձեռքը խնդրող յոթ քաջերին և նրանց հետ ճամփա ընկավ դեպի Գյուրջիստան:

Գյուրջիստանում կար մի զորեղ իշխան՝ անունը Գյորգի՝ Դավթի նման քաջ ու կտրիճ, Դավթի նման մեծահոգի:

Նա հազար աչքով հսկում էր իր շենշող աշխարհը, ինչպես Դավիթը՝ իր սիրասուն Սասունը: Այդ չքնաղ աշխարհին աչք էին դրել նախանձով լցված երեք թագավորներ, որոնք իրենց խուժդուժ զորքով խուժել էին դեպի բերդ:

Մեկը կանգնած հարյուրի դեմ, և տասն ընդդեմ հազարի՝ օրհասական մարտ էր գնում, երբ Դավիթը յոթ քաջերով գահավեժ ժայռի նման սուրաց դեպի կռվի դաշտ և իր հուժկու Թուր Կայծակին շողացնելով՝ հնձեց թշնամու զինվորներին, փրկվածներն էլ մազապուրծ փախան:

Նայեց Գյորգին այդ անծանոթ քաջին՝ իրեն զորավիգ...

Ու գրկվեցին երկու քաջեր՝ եղբայրական սիրով լի, ինչպես Կազբեկն ու Արարատ՝ համ-

բուրվեցին իրար հետ... Յոթ օր յոթ գիշեր խնջույք և ուրախություն էր բերդում:

Գյորգին ուներ յոթ չքնաղ դեռափթիթ քույրեր, որոնց, ի սեր եղբայր Դավթի, տվեց յոթ քաջերին կնության և ամեն մեկին մեծամեծ ընծաներով իր հայրենիքն ուղարկեց: Իսկ Դավթի պատվին ամեն օր մի մրցախաղ, վարազաորս ու ձիարշավ էր կազմակերպում, և Կախեթի կարմիր գինին հեղեղի պես հոսում էր ի պատիվ հյուրի: Այսպես ուրախ անցնում էին օրերն իրար ետևից, սակայն յոթ տարի էր, որ Դավիթը դուրս էր եկել Սասունից, և ժամանակն էր հրաժեշտի: Համբուրվեցին երկու եղբայր դյուցազուն, և Դավիթը, ձի հեծնելով, ճամփա ընկավ դեպ Սասուն:

...Միհրն այդ օրը Անդոկ գետի եղեգնազարդ ափերով ման էր գալիս՝ ուրախ մի երգ սուլելով, երբ մի վիթխարի վարազ դուրս թռավ շամբուտից ու փախավ, մեր մանուկ հսկան էլ՝ նրա ետևից: Դավիթը, տեսնելով, որ մի անզեն տղա հետապնդում է վտանգավոր թշնամուն, սոսկաց, նշան առավ և նետելով իր ահագին մկունդը՝ գետին տապալեց ահեղ վարազին:

Խիստ զայրացավ մանուկ Միհրը և ձիու սանձից կախվելով՝ ասաց.

- Հեյ դո՛ւ, ո՞վ ես, օտարակա՛ն, ինչո՞ւ զարկիր իմ որսին:
Որ այդպես է, ցա՛ծ իջիր շուտ և ի՛նձ տուր քո տակի ձին...
Խնդաց փա՜ռ-փա՜ռ Դավիթն ուրախ.
- Ձին ի՞նչ կանես, դու դեռ հազիվ մի կաթնակեր երեխա...

Ու փորձեց սանձը պոկել մանկան ձեռքից, բայց իզուր. ասես սանձից կախված մի քարաժայռ պահում էր ամուր: Զարմացավ, կարկամեց Սասնա Դավիթը. ծովեր էր անցել, ձորեր

էր անցել,սակայն մի բարակ առու, մի բարակ պարիսպ փակում էր իր ճանապարհը:

Վիրավորվեց ու սրտնեղեց Միերը. ի՞նքն է բարակ առուն, ի՞նքն է բարակ պարիսպը.

- Իջի՛ր, ասում եմ, իջի՛ր, որ զարկե՛նք
իրար, -
Ասաց ու կանգնեց Միերն, ինչպես սար:

Ճար չկար... Հայր ու որդի կպան իրար. քաշ-քըշեցին, ընկան գետին ու նոր ուժով կպան իրար: Սակայն նրանցից ոչ մեկը իր ախոյանին չէր կարողանում գետնով տալ: Նրանց թափից, հուժկու զարկից թնդում էին սարերը Սասնա:

Լուրը գնաց հասավ Սասուն՝Խանդութ խաթունին, թե՝ հասի՛ր, բաժանի՛ր հայր ու որդուն. սպանում է մեկը մյուսին:

Խանդութը, մազերն արձակ քամուն տված, խելակորույս վազեց հասավ և արցունքն աչքերին կանգնելով երկուսի միջև՝ ասաց.

-Դավի՛թ, Մհե՞րն է,
Դավի՛թ, Միեր՞ն է,
Մի՛ զարկի դու մեր
Մանուկ Միերին...
Մհե՛ր, քո հե՞րն է,
Մհե՛ր, քո հե՞րն է,
Մի՛ զարկի, Մհե՛ր,
Թուխմորուք Դավթին...
Քար կտրեց Դավիթն ու կանգնեց մնաց...
Քար կտրեց Միերն ու կանգնեց մնաց...
- Իմ հե՞րն ես դու...,- Միերն ասաց...
- Մհե՞րն ես դու...,- Դավիթն ասաց...
Ասաց ու հասավ, գրկեց Միերին:
Նայում էր Խանդութն՝ արցունքն աչքերին:
Ապա միասին՝ երեքն իրար հետ,
Խնդության լացով մտան Սասնա բերդ:

Սակայն ուրախության լացը տխրության լացի փոխվեց Խանդութի համար, երբ Դավթի աջ թևի Խաչ Պատերազմին ածուխի պես սևացած տեսավ:

Դավիթն իսկույն գլխի ընկավ. դա նրանից է, որ ինքը մոռացել էր. Չմշկիկ Սուլթանին խոսք էր տվել յոթ օրից գնալ նրա կռվին, մինչդեռ յոթ օրը եղել էր յոթ տարի: Ոչ, մանուկ Միհրը չէր որ իրեն այդպես ուժգին հարվածում էր, այլ դրանք Խաչի զարկերն էին, և իր դրժած երդումն էր որ իրեն կռացնում էր Միհրի առաջ:

Այսպես մտածեց ու այսպես ասաց Դավիթը Խանդութին և իսկույն զինավառվելով՝ հեծավ իր ձին ու գիշերով դեպի Խլաթ սլացավ:

Խանդութն իզուր լացեց, կանչեց. Դավիթը ետ չդարձավ...

Հասնելով Խլաթ՝ Դավիթը կանգնեց բարձր բերդի դռանը և ներում խնդրելով, որ նոր է հիշել ու եկել, դուրս հրավիրեց Չմշկիկին՝ կռվելու:

Բայց Չմշկիկ Սուլթանը չէր ուզում կռվել Դավթի հետ. Դավթին դարձյալ տեսնելով՝ նախանձի և խանդի յոթ տարվա սառույցը հալվելդարձել էր վարար գետ, և վառված նրա սիրով՝ ասաց Դավթին.

-Ջիուցդ իջի՛ր, վերև՛ արի, ապրենք ուրախ միասին,
Ես քեզ սիրող կին կլինեմ, դու՝ ինձ կտրիճ ամուսին:
Մի՛ թող այրի Չմշկիկին ու որբ՝ քո Վարդ աղջկան,
Որ սիրուն է հանց[1] Սիփանա սարից իջնող լուսնկան...
-Չէ՛, Չմշկի՛կ, աշխարհի հետ ես չեմ փոխի Խանդութին...

[1] **հանց** - *ինչպես*

Մերժեց Դավիթը Չմշկիկին. ինքը, պայմանի համաձայն, եկել էր կռվի. չէր ուզում պարտական մնալ մի տկար կնոջ: Եվ մինչև Սուլթանը կգար, Դավիթը մտավ գետը՝ լողանալու (շատ էր հոգնած ու քրտնաթոր՝ ճանապարհից իր երկար): Երբ քնից վաղ զարթնած Վարդը՝ աղջիկը Դավթի, լսեց, որ հայրը, որին իր մայրը յոթ տարի ամեն օր սպասել էր, եկել է կռվելու և այժմ գետում լողանում է, մտքում ասաց.

«Ի՜նքս կառնեմ վրեժը մեր»:

Մորից գաղտնի առավ աղեղն ու դուրս սողաց, գետափ վազեց ոտաբոբիկ և եղեգնուտում թաքնվելով՝ նշան բռնեց հոր թիկունքին չդողացող ձեռքերով...

Ու մինչ Դավիթն անգետ դավին՝ լողանում
էր անխռով,
Ճայթեց ծգված լարն աղեղի, թռավ նետը
թունավոր,
Ծակեց քաջի թիկունքը լայն ու սրտի մեջ
խրվեց խոր...
Ցավից սաստիկ գոռաց հսկան ու դեպի
ափ նետվեց նա,
Բայց ուժասպառ ընկավ այնտեղ՝ փլվելով
ինքն իր վրա:
Դավթի գոռոցն այդ ահագին մինչև Սա-
սուն որ հասավ.
- Զարկեցի՜ն մեր Դավթին, Օհա՛ն, - Քեռի
Թորոսը ասավ. -
Դավթի ձենն է, ելե՛ք, տղե՛րք, գնա՛նք Դավ-
թին օգնության...
- Շո՜ւտ արեք, շո՜ւտ, խավարում է ճրագը
մեր Սասնա տան:

Օհանը և Թորոս Քեռին, մեծ բազմության գլուխն անցած, եկան հասան Խլաթ: Տեսան

Դավթին՝գետի ափին ընկած, նետը՝սրտին, իսկ Ձալալին արցունք թափում, լաց էր լինում տիրոջ վրա:

Երբ հարցրին Դավթին, թե ո՛վ զարկեց իրեն, և ո՛ր աղեղից նետը թռավ, Դավիթը հազիվհազ պատասխանեց.

-Նետը եկավ եղեգնուտից,
Բայց... չգիտեմ, թե ո՛վ զարկեց...
Որոնեցին ու շամբուտում
Գտան աղջիկ մի դեռատի՝
Աղեղն ամուր բռնած ձեռքում,
Որ մեռել էր ձայնից Դավթի:
-Աղջիկս էր դա, - Դավիթն ասաց,-
Որը իր մոր վրեժն առավ.
Սպանեց հորն երդմնազանց...

Եվ պատգամ տալով, որ Չմշկիկին չդիպչեն, քանի որ նա չէր ուզում սպանել իրեն, հորեղբոր ծնկան վրա շունչը փչեց:

Խանդութը, որը բերդի բարձունքում ծովծով աչքերը արցունքով լի՝Դավթի ճամփան էր պահում, երբ հեռվից տեսավ դիակակիր տըխուր թափորը, ծեծեց ծնկներն ու բարձրաձայն աղաղակեց ողբագին.

- Անարև, անսեր աշխարհն ի՞նչ անեմ,
Երբ չկա Դավիթն, էլ ինչո՞ւ ապրեմ...
Ու ցած նետվեց խելակորույս Սասնա
բերդի տանիքից...
-Մարե՞... - գոռաց Միհրն, ընկավ արնաշաղախ մոր վրա...

Սասնա մեծ տան առաջ՝ երկու մեծ
նաշ1 իրար կից...
Ու նրանց շուրջ մի բազմություն՝ սըր-
տակտուր, սգավոր,
Լալիս էին մեծ ու պստիկ սասունցի-
ները բոլոր...
Ու գնացին հոծ բազմությամբ, լալով
հասան Ծովասար,
Այնտեղ՝ Առյուծ Մեծ Միերի գերեզմա-
նի մոտ մարմար,
Հող դրեցին իրենց Դավթին ու Խան-
դութին վաղամեռ...
Ու սրտաբեկ ու անպաշտպան որբերի
պես գլխիկոր
Վերադարձան դեպի Սասուն՝ սևեր
հագած, սգավոր...

[1] **նաշ -** *դագաղ, դին գե-ռեզման տանելու պատ-գարակ*

Մեռան Դավիթն ու Խանդութը:

Զենով Օհանը՝ կսկծու, Թորոս Քեռին՝ ետևից, մնաս բարով ասին Սասնա ու գնացին մի տարում: Եվ որբ մնաց բոլորովին մանուկ Միերն աշխարհում՝ վիշտը սրտում, տխուր - տրտում, վիզը ծուռ:

Վախկոտ Վերգոն, որին մահը վաղուց էր տարել, թողել էր մի սևահոգի չար ժառանգ, մի Կայեն՝ Ճնճղափորիկ անունով: Դավթի մահից հետո, ձեռքն առնելով Սասնա տան դարպասների բանալիները, ոչ միայն տիրացավ նրա ամբողջ կայքին, իրավունքին, այլև սկսեց խեթ նայել Միերին՝ Դավթի որդուն: Եվ որոգայթ էր որոճում Միերի դեմ՝ մտածելով.

Կմեծանա ու կոլորի այդ որբն իր վիզը
մի օր.
Քանի շուտ է, ինքը պիտի ոլորի վիզը
նրա.
Արծվին պետք է խեղդել բնում, քանի դեռ
թույլ ճուտ է նա:

Միերի մանուկ հոգին, որը վճիտ էր, ինչպես առավոտ, ինչ իմանար, որ հարազատը հարազատի դեմ կարող է դավ լարել: Ու չհավատաց բարի պառավի հորդորներին, թե աչքը բաց անի, ճանաչի չարին՝ Ճնճղափորիկին, որ Սասնա աշխարհին իշխան դարձած՝ուզում է սպանել Միերին, որ երբ մեծանա, տեր չդառնա իր հոր աթոռին:

... Մանկական անուշ քնով քնած էր Միերը, երբ երազում երկու ճերմակ աղավնիներ, գլխավերևում պտույտ գալով, նստեցին իր ուսերին ու լալով մրմնջացին, թե ինչո՛ւ ծնեցին իրեն ու որբ թողեցին այս չար աշխարհում: Միերի հարցին՝ ովքե՞ր եք դուք, աղավնիները իջան գետնին, կանգնեցին նրա դեմ.

Եվ ա՜յ քեզ զարմանք, հրա՜շք հիասքանչ.
Դավիթն ու Խանդութն են նրա առաջ...

Երբ Միերը ուրախ առաջ նետվեց, որ ընկնի գիրկը նրանց, նրանք դարձյալ թևեր առան և ճերմակ աղավնիներ դարձած՝ դուրս թռան երդիկից:

Միերը հանկարծ զարթնեց քնից և ի՜նչ տեսնի. դուռը կիսաբաց՝ Ճնճղափորիկն է մահը աչքերում կանգնած դռան մեջ՝ սուրը մերկացրած...

Միերը վեր թռավ ու զարմանքն աչքերում՝ հարցրեց.

- Հորեղբա՛յր, ուզում ես դու ի՞նձ սպանել,
ի՜նչ է...
-Այո՛, սպանեմ քեզ պիտի, Միե՛ր...
-Ինչո՞ւ, հորեղբա՛յր..., ի՞նչ մեղք եմ արել՝
դեռ տասը տարեկան...
-Կանեիր, եթե դառնայիր քսան...

«Ասում էր բարի պառավն իմաստուն, իսկ ես միամիտ՝ չէի հավատում», - խոսեց Միերն ինքն իր հետ և որպես աղեղից սուրացող սուր նետ՝ թռավ դեպի Ճնճղափորիկը, ոլորեց նրա թևը, ձեռքից ընկած սուրը ոտքով շպրտեց մեկդի ու թնդաց՝ կանգնած դահճի դեմուդեմ.

-Ուզենամ՝ հիմա կաշիդ կքերթեմ,
Սատանա՛,վախկո՛տ, նե՛նգ ու տմարդի՛.
Սասունա իշխա՜ն...
Բայց ազգականի արյուն չե՞մ թափի,
Չե՞մ սրբապղծի պիղծով քո արյան
Շեմքը սրբազան իմ հայրական տան:
Ճամփա՜ տուր, ճամփա՜,
Հեռո՜ւ քաշվիր, շու՛ն.
Թող այսուհետև միշտ խռով կենա
Քո՝ ազգականի շվաքն ինձ վրա,
Քո հացը՝ լեղի, ջուրը՝ օձի թույն...-
Ասաց, դուրս ելավ Միերը Սասնա
Ու սիրտը արյուն - արցունքով լեցուն՝
Թողեց Սասնա տուն...

Քայլամոլոր ու գլխիկոր, հարազատի տված խորունկ վերքը սրտում՝ Միերն այդ առավոտ գնաց Ծովասար՝ իր հոր ու մոր շիրմին այցի: Լացեց Միերը վշտագին.

-Հերի՜կ, վե՜ր կաց, մերի՜կ, վե՜ր կաց.
Դադարգյուն1 են արել որբիս.
Զարկել են ինձ քարեքար,
Ինձ արել են դարբեդար2,
Սասնա վրա ձյուն է եկել,
Դուռ ու դարպաս վրաս փակել...

[1] **դադարգյուն** - *տուն ու տեղից քշված, հալածված*
[2] **դարբեդար** - *դադարգյուն*

Բայց ի՜նչ աներ հայրը որբի. գնացել էր պողպատ ուժը իր թևերի...

Բայց ի՜նչ աներ մայրը որբի. հանգել էր օջախ-կրակն իր սրտի. ինչպե՜ս տաքացներ ոտքերն իր որբի...

Հայրն ասաց որդուն.

-Գնա՛ դու, աշխարհ-աշխարհ մա՛ն արի,
Ճանաչի՛ր չարն ու բարին աշխարհի:
Չարին չա՛ր եղիր ու բարուն՝ բարի՛,
Հացդ ճակատիդ քրտինքո՛վ ճարի...

Միերը ինչքան էլ ականջ արեց, էլ ձայն չելավ հոր գերեզմանից, էլ ձայն չելավ մոր գերեզմանից. կռացավ հոր, մոր հողը համբուրեց, վեր կացավ ապա, ցուպը ձեռքն առավ ու ընկավ ճամփա...

Գայլից փախած գառ էր Միերը, բնից ընկած անթև թռչուն...

Գնում էր նա տրտում-տխուր՝ անիծելով իշխան դարձած հորեղբորը ինքն իր սրտում, գնում էր նա, չգիտեր՝ ո՛ւր:

Գնա՛ց, գնա՛ց ու երեկոյան հասավ մի գյուղ, որը գտնվում էր Ջզիրու Շատ կոչվող գետի եզերքին: Մի բարի պառավ նրան տեղ տվեց, կերակրեց: Հոգնած քնած էր, երբ պառավը սարսափահար արթնացրեց նրան. ինչպես ամեն տարի գարնանը, այդ օրն էլ հորդել էր գետն ու քշում տանում, ավերում էր ամբողջ գյուղը. փախչում էին մանուկ ու ծեր:

-Դո՛ւ էլ փախիր, կյա՛նքդ փրկիր, կանա-
չարև ջահել ես դու...

Միերն այդ որ լսեց, էլ չսպասեց. դուրս թռավ տնից, տեսավ՝ հազար-հազար վտակ, փրթած սարից, վիշապի պես վարար-վարար վազում են վար:

-Կացե՞ք, - գոռաց,-
Ես կոլորեմ էդ վիշապի վիզը հիմի...

Ու մինչև սար տասը քայլ անելով՝ հսկա մի ժայռ պոկեց ու գլորեց փրփրաբերան գետի առաջ ու պապի պես, որ առյուծին ճեղքեցարեց երկու կտոր, գետը երկու ճյուղ արեց՝ մի կեսը ձախ ու մյուսը աջ: Ապա տղամարդկանց իր հետ առնելով՝ սարը ելավ, բահ-բրիչով ու լոմերով պոկեց բերեց հսկա վեմեր.

-Շարի՛ր, վարպե՛տ, - ասաց Միեր:-
Շաղա՛խ արեք, կի՛ր բերեք, կի՛ր,
քա՛ր բերեք, քա՛ր...

Ու յոթ գիշեր ու յոթ ցերեկ շարեց-դրեց քարը քարին ու գետի առաջ մի վիթխարի պատվար[1] կանգնեցրեց, որ Ձգիրու Ծատն այսուհետև ինչքան գոռա ու վարարի, էլ չքշի գյուղի վրա, արտ չտանի, տուն չավերի...

Ամբողջ գյուղը ոտքի կանգնեց, մեծ ու պստիկ ընկան ձեռ-ոտ.

-Արի՛, - ասին,- մնա՛ մեզ մոտ, դու մեր
եղբա՜յր, դու մեր որդի՜ն...
-Պիտի գնամ, - Միերն ասաց,-
Աշխարհ ման գամ ու աշխարհի չափեմ-
կշռեմ չարն ու բարին...

Ժողովրդի օրհնանքն առած՝ Միերը գնա՛ց, գնա՛ց, հասավ մի աղբյուրի: Ձրի գլխին նստել էին երիտասարդ երկու նախրորդ՝ ստվարաթիվ նախիրն իրենց սարալանջում թողած արոտ:

Միերը շատ անոթի էր և ուտելու բան խնդրեց: Ամեն մեկը իր մախաղից հանեց օթեկ[2] մի գարեհաց.

- Այդքա՜ն նախիր ու գարեհա՞ց:
-Էսքան ապրանք ունենայինք...
-Ու՞մն է հապա...
-Սեպուհ Սեթին...
-Ինչու՞ հապա, - Միերն ասաց, -
Ուտում է նա չոր գարեհաց...
Նախրորդները ծիծաղեցին.
-Ծուռ ես, տղա՛...
Այո՛, ծուռ էր Միերը մեր. մանուկ էր դեռ՝
զուլալ հոգով, ջինջ, անարատ:

Պատմեցին նրան, որ զանգին[3] աղան դեռ ոչխարի հոտեր էլ ունի, ձիերի ջոկ և ուղտեր, պալատի պես շքեղ մի տուն, մառան-ամբար՝ յուղ ու մեղրով, հացով լեցուն...

-Ինքն ուտում է, ձեզ չի՞ տալիս:
-Չի տալիս, բա՜...
-Ինչո՞ւ հապա:

[1] **պատվար** - *պատնեշ՝ երկար ու բարձր հողաթումբ*

[2] **օթեկ** - *մնալով՝ հնացած*

[3] **զանգին** - *հարուստ*

-Կարգն էդպես է...
-Ի՞նչ կարգ է դա...

Նախրորդները խիստ զարմացան. ո՞ր երկրից էր, որ էս բաները մինչև օրս չէր իմանում: Եվ երբ լսեցին, որ Առյուծաձև Միերի թոռն է՝ Դավթի որդին, որը զսպել է Ձզիրու Շատն ու սանձ դրել գետի բերնին,- չհավատացին.

-Հանաք ես դու անում մեզ հետ, Աստվա՜ծ վկա...
Ու բարկացավ Միերը մեր.
-Ինչու՞ պիտի հանաք անեմ կամ սուտ ասեմ.
Դավթի տղա Միե՛րն եմ ես:
Ես ստի հետ գլուխ չունեմ.
Սուտը, որ կա, սատանինն է:
Մինչդեռ նրանք նստած այդպես խոսում էին, զրուցում,
Ու Միերը ջրում թրջած գարեհացն էր դեռ կրծում,
Մեկ էլ հանկարծ տեսան՝ սարից մի ժայռ պոկված՝
Դղրդոցով գլոր-գլոր գալիս է ցած
Ու շիփ-շիտակ՝ նախրի վրա:
-Կորա՜նք, ամա՜ն,-
Ճչացին խեղճ նախրորդները միաբերան,-
Տակով կանի նախիրն հիմա,
Մեզ էլ, հեյ վա՜խ, հացակարո՜տ ու տնավե՜ր...
-Հացակարոտ անի դա ձե՞զ, տուն-տնավե՞ր...-
Գոռաց, թռավ Միերը մեր.
Դեպի հսկա ժայռը վազեց,
Թիկունքն ուժգին
Տվեց ժայռին
Ու կանգնեցրեց ժայռն ահագին:

Կանգնեց Միերն, ինքն էլ մի ժայռ՝ ժայռի
կողքին,
Ու ձայն տվեց նախրորդներին.
-Կանգնե՞ց, տղե՛րք, մի՛ վախենաք.
Ձեր մախաղում դուք մի կտոր չոր գարե-
հաց մի՛շտ կունենաք...
-Փա՞ռք քեզ, Աստվա՛ծ, հրաշք էր, հա՞...
-Էդպես էլ ո՞ւժ... դեռ երեխա՞...
Ու նախրորդներն ափիբերան, ուրախա-
ցած՝
-Ապրե՛ս,- ասին,- Սասնա՛ Միեր, դու
փրկեցիր նախիրն ու մեզ...
-Մե՞րն եմ ես...
-Միերն ես, հա՞, վկա՛ Աստված.
Հավատում ենք արդեն հիմա:
Սեպուհ Սեթը որ իմանա,
էլ քեզ ձեռքից բաց չի թողնի,
Կառնի իր մոտ կառավարիչ, ու կապրես հա՞,
Արժան է քեզ, Աստվա՞ծ վկա:
-Չէ՛, ախպե՛ր, չէ՛, - Միերն ասաց, -
էդպես մարդու չեմ աշխատի,
Որ սեր-կարագն ինքը կուտի
Ու մշակին չոր հաց կտա:
Հրե՞շ է դա.
Աստված դրա հոգին առնի...
Մնաք բարո՞վ, ես գնացի,
Շնորհակալ եմ հացի համար:
-Գնաս բարո՞վ, կյանքդ երկա՞ր:
-Բարո՞վ եկար, բարո՞վ գնաս, Սասնա՛ Միեր,
Ազի՛զ ախպեր,
Դու փրկեցիր մեզ էն չարից, բարբարոսից
էն անօրա1,
Մենք քեզ երբեք չենք մոռանա...
-Միերն էլ ձե՛զ չի մոռանա, մեռնեմ ես ձեզ,
ձեր արևին,-
Ասաց Միերն ու ճանապարհ ընկավ կրկին:

[1] **անօրա** - *անօրեն*

Գնա՛ց, գնա՛ց Միերը մեր ու մի օր էլ գիշերմութին հասավ Բաղեշ: Օտար երկի՛ր, օտար մարդի՛կ. ո՞ւմ դուռ զարներ նա գիշերով: Ու փողոցում՝ մի պատի տակ, գլուխը մի քարի դրած՝ քնեց Միերը մինչև լուսաբաց:

Առավոտյան քաղաքի հետ քնից զարթնեց. ոչ ոք իրեն չէր նկատում ու չէր տեսնում: Քայլամոլոր, փորն անոթի՝ քայլում էր նա: Մի տեղ հանկարծ մի փուռ տեսավ, փուռը լի հաց՝ կրակից նոր հանած-փռած: Միերը կանգնած մնաց դռան առաջ՝ աչքը հացին: Փռնապանը բարկացավ, հաց չտվեց ու վռնդեց: Իսկ Միերը անոթի էր, բայց փող չուներ: Նա պատրաստ էր աշխատելու, միայն թե նախ՝ փռնապանը հաց տար, ուտեր ու կշտանար:

Կերավ Միերն ու կշտացավ. երբ կշտացավ, գործի անցավ: Գիշեր-ցերեկ ոտքի վրա աշխատում էր՝ հացափորի, բայց թե գոնե կուշտ հաց ուտեր... Բա դա խի՞ղճ է. ողջ օրը դատի, բայց կուշտ չուտի՞: Իսկ փռնապանը, թե՝ չես աշխատում, մի՛ աշխատի. աշխատող շա՛ատ:

-Վա՜յ քո խղճի
Տունը փլչի.
Փուլ գա գլխիդ քո փուռը, հա՜, մա՛րդ
անաստված,
Ես գնացի...

Ու գնաց Միերը և մի հարուստ հողատերի դարձավ մշակ: Աշխատում էր նա ընկերների հետ կորեկ հացի համար օրնիբուն, մինչդեռ ցորեն հացը տերն էր ուտում. իրենք չունեին կարգին հագուստ, տիրոջ հագին՝ ընտիր ղումաշ[1]. իրենք չունեին մի չոր անկյուն, իսկ տիրոջը՝ պալատ շքեղ...

[1] **ղումաշ** - *բամբակե կամ մետաքսե նուրբ կտոր*

-Օրենքն էդ է, Սասնա՛ Միեր,
Իզուր ես դու միտքդ տանջում...
-Պետք է մի նոր օրենք բերել:

-Էդ օրենքը ո՞վ կբերի...
-Ե՛ս, դու՛ և նա՛, բոլո՛ր ս, մե՛նք.
Կմիանանք ու կբերենք մի նոր օրենք.
Ով որ դատի, նա էլ կուտի...
Ուժը մենք ենք, մեր ուժով են նրանք
հարուստ...
-Ճիշտ է ասում, ես իմ հոգին...
-Անեծք անգութ էս օրենքին ու էս
կարգին...

Թե ինչպես եղավ, տերն իմացավ Միերի ասածների մասին, կանչեց իր մոտ ու հորդորեց՝ ճորտերին իր դեմ չհանի, իսկ Միերին նրանց վրա վերակացու կկարգի.

- Կապրես քեզ համար, ինչպես կամենաս,
Միայն թե, Միե՛ր, դու հանգի՛ստ մնաս.
Հնազանդ ու հեզ,
Ձուր չպղտորես...
Երկու ձեռքերը կռուփ1 արած,
Մարաթուկա լեռան նման տիրոջ դեմ
կանգնած՝
-Սրա՜ն մի տեսեք...- գոռաց սասունցին,-
Միայն ի՛մ մասին ես չեմ մտածում:
Բոլորի վիշտն է չոքել իմ կրծքին,
Բոլորի հառաչն ու լացն իմ սրտում...
Տերը թե՝ գոհ են բոլորն իրենից,
Միերն է միայն դժգոհ և ըմբոստ...
Միերը թնդաց.
- Ինչպե՜ս թե գոհ են, անխի՛ղճ, անաստ-
վա՛ծ...
-Հարցրո՛ւ նրանց...
-Ինչպե՞ս կարող է ճորտը գոհ լինի...
-Լա՛վ, փորձե՛նք արի:

Ու փորձեց տերը. կանչեց ճորտերին, ի մի հավաքեց ու հարցրեց նրանց՝ դժգո՞հ եք ինձնից: Նրանք լուռ էին՝ գլխիկոր կանգնած: Ու նորից հարցրեց, որոտաց նորից.

[1]**կռուփ** - *բռունցք*

- Ճի՞շտ է ասում նա՝ դժգո՞հ եք ինձնից:
- Ո՛չ, ո՞վ է ասում. Աստված պահի քեզ.
- Մեր տերն ես...
- Մեր հերը...
Միերը ցնցվեց. մենա՜կ էր, մենա՜կ...
-Քաշվում են քեզնից, կեղծում են վախից...
-Վախի՞ց եք ասում. քաշվո՞ւմ եք ինձնից...
-Չէ՜, ինչո՞ւ պիտի վախենանք քեզնից...
-Ինչո՞ւ զավակը երկնչի1 հորից,
Դու որ չլինես, քաղցից կմեռնենք,
Քո պահածն ենք մենք...
-Լսեցի՞ր, Միե՛ր, լավ լսո՞ւմ ես դու, - գոչեց տերն ուրախ...
- Լսեցի,այո՛, մենա՜կ եմ, հե՜յ վախ..., - ասաց
Միերը իր ընկերներին, թողեց ու գնաց՝
Սրտում լի կսկիծ ու աչքերում լաց...
Քրքջաց տերը.
-Ճորտե՜ր դուք հիմար,
Աստված ձեզ ձեռք է տվել բանելու,
Ինձ էլ խելք և ուժ՝ իշխելու համար...

[1] **երկնչել** - *վախենալ*

Միերը, տխուր-տրտում երկրից երկիր անցնելով, գնաց հասավ Քարե քաղաք:

Տեսավ, որ շենք են շինում: Մարդիկ ժիր մեղուների նման աշխատում են, ելարանով ելնում են վեր, իջնում են վար, փայտ են կրում, շաղախ ու քար:

Միայն մի մարդ, հագած-կապած, ձեռքերն ետև, կանգնած հանգիստ ու հիացած, նայում էր շենքին՝ մեկ-մեկ գոռալով, հրահանգելով:

Նա տերն էր անշուշտ. Միերը մեր մոտեցավ նրան, բարև տվեց երկու անգամ: Մարդը նայեց, անխոս մնաց: Մեր Միերը երրորդ անգամ **«բարև՛»** գոռաց:

-Դու ինչո՞ւ ես գոռում, տղա՛...
-Խուլ ես ասի և գոռացի:
-Խուլը դո՛ւ ես, ծո՛ւռ սասունցի...
-Ի՞նչ իմացար՝ Սասնա եմ ես:

[1] **բնութք** - *բնույթք՝ բնավորություն*
[1]**հեստ** - *անհնազանդ, ըմբոստ*
[2] **վես** - *հպարտ, ամբարտավան*

-Քո բնութքից1. հեստ2 ես ու վեսՀ:
Ի՞նչ ես ուզում:
-Գործ եմ ուզում:
- Էդպես ասա:
Ուժդ տե՞ղն է:
Միերն իսկույն ձեռքը կռուփ բռնեց նրա քթի առաջ...

Ու Միերը անցավ գործի. աշխատում էր նա անդադար, քար էր կրում մեջքով, ուսով: Երեկոյան, դառը դադրած[3], իր հացն ուտում, պառկում էր նա, որ առավոտ՝ լույս չբացված, քունն աչքերում՝ վաղ վեր կենա...

[3] **դադրել** - հանգստանալ, խաղաղվել

Միերն այստեղ էլ տեսավ, որ բոլորը աշխատում են հարուստների ու իշխանների համար, որ շինարար ձեռքերն իրենցն են, բայց ապրում են կիսավեր ու խարխուլ խրճիթներում, որ այստեղ էլ վարպետ-բանվոր մի փոր հացի համար աշխատում են ամիսներով.

-Ես կերել եմ, կինս ու որդի՞ս, տո՞ւն ինչ տանեմ...
-Ես բոլորիդ պարտակա՞ն եմ...

Երբ հերթը հասավ Միերին, հաշվեկալը հաշվեց, հանեց ու տանտիրոջ երեսը նայեց.

- Շա՜տ է կերել, բան չի մնում տակը, - ասաց:
- Վնաս չունի, մի բան գրի՛ր, մե՜ղք է տղան:
- Ողորմություն չեմ ուզում ես, աշխատանքիս վարձն եմ ուզում:
- Տղա՛, շատ ես դու տաքարյուն:
- Տո՛ւր, թող կորչի:

Սակայն Միերը չգնաց. պահանջում էր, որ մյուսների վարձն էլ լրիվ հաշվի ու վճարի: Մեծ մուրճն առավ, վրա հասավ, թե փուլ կբերի տունը գլխին ու կվառի, եթե աշխատողի վարձը կտրի, վիզը զարկի էդ խեղճերի...

Հաշվեկալի ուշքը գնաց և աթոռից փռվեց գետին. փախավ տանտերը՝ փողի պարկը թողած այնտեղ:

Միերն իսկույն վրա հասավ, պարկը առավ, որ բաժաներ ժողովրդին, բայց... ոչ ոք չկար. փախել էին: Միերն այնժամ պարկը ուժգին զարկեց գետին.

- Վա՜յ ձեզ, մարդի՛կ, վա՜յ ձեզ, - գոչեց ցավված սրտով,-
Քանի այդպես անմիաբան, վախկոտ եք դուք,
Միշտ կմնաք խեղճ ու աղքատ, ճորտ ու ստրուկ...
Ու ճանապարհ ընկավ դարձյալ՝ թողած քաղաքն իր ետևում...
Միերն ուր էլ որ գնում էր, տեսնում էր ցավ, լաց ու տանջանք,
Ամեն տեղ էլ՝ տեր ու ճորտեր, մրմունջ-տանջանք ու հառաչանք,
Ծովացել էր լացն աշխարհի՝ անտակ ու մեծ սրտում նրա,
Ծանրացել էր ցավն ամենքի նրա կրծքի, ուսի վրա.
էլ չէր դադրի վեր1 աշխարհին, էլ հողն իր տակ չէր դիմանում,
Մինչև ծունկը խրվում էր խոր, որտեղ որ նա ոտք էր դնում...
- Երթամ էլի ես իմ Սասուն, երթամ երկիրն իմ հայրենի,
Թե չէ, զուր է, ծանրացել եմ, օտար հողը ինձ չի տանի,-
Ասաց մի օր Միերն իրեն, ասաց ու վեր կացավ իսկույն:
Կոռն ուսն առավ, ճամփան բռնեց, վերադարձավ դեպի Սասուն:

[1] **վեր** - *վրա*

Եկավ, ինչ տեսավ. Սասունն էն չէր էլ. նորից հարկատու էր Մսրին ու հորեղբայր Ճնճղաֆորիկին, նորից՝ Մսրա սրին հպատակ: Պապի

հողը տխուր էր, հոր երկիրը՝ ավեր. էլ ինչո՞ւ էր ապրում ինքը:

- Երթամ,- ասաց,- հեծնեմ իմ հոր հրեղեն ձին,
Ձեռքս առնեմ մեր Սասնա տան Թուր Կայծակին,
Ոտքի հանեմ Սասնա բոլոր կտրիճներին,
Զարկենք չարին,
Բերենք բարին...

Ու պապի բերդը մտնելով բռնի՝հրեղեն ձին թամբեց, քաշեց Թուր Կայծակին ու քշելով քաղաքի մեջ՝ ուժգին ձայնով ռազմահրավեր կոչեց Սասնա առյուծ-քաջերին: Կոչ արեց, որ առնեն մկունդ, գուրզ ու սուր և Առյուծաձև Միհրի թոռան՝ Կայծակնաթուր Դավթի որդու հետ միասին զարկեն վատին ու տմարդին, բերեն նոր օր ու նոր օրենք, բերեն բարին:

Բայց մարդ չեկավ նրա կանչին, չարձագանքեց Սասունը լուռ նրա ցասկոտ մարտականչին: Միայն երկու ծնկակոտոր ծեր-ալևոր նրա առաջ ելան տխուր ու գլխիկոր:

Խոր հառաչեց Միհրը մեր. քաղցր է շղթան բիրտ բռնության, ռամիկը դեռ՝ անմիաբան:

Ափսո՜ս, Սասո՜ւն, էս ո՞ւր հասար: Ու ձին քշեց նա Ծովասար՝իր հոր ու մոր գերեզմանին.

-Միհրն եմ ձեր, մեկիկ որդին.
Վե՜ր կացեք, վե՜ր, մի ճա՜ր արեք ձեր խեղճ որբին:
Շատ եմ շրջել վեր աշխարհին, տեսել եմ վիշտ համատարած.
Աշխարհը ողջ՝ Չարի ձեռքին,
Աշխարհն արյուն, արցունք ու լաց...
Ծովացել է լացն աշխարհի
Մեջ իմ սրտի՜ն, մեջ իմ սրտի՜ն.
Ծանրացել է ցավն ամենքի
Իմ ուսերի՜ն, իմ ուսերի՜ն...
Ծանրությունից էդ ահագին

Էլ հողն իմ տակ չի դիմանում.
Մինչև ծնկներս խրվում եմ խոր,
Որտեղ որ ես ոտք եմ դնում:
Սասունն էլ ինձ չի ընդունում,
Տեղ չի տալիս մեջ իր ծոցին.
Ասեք, ես ո՞ւր քշեմ իմ ձին...-
Ասաց Միհրն արտասվագին՝
Իր հոր ու մոր հողին ընկած:

Ու ձայն ելավ հողից, ասաց.
- Հերի՛ք է, Միհ՜ր, հերի՛ք է, Միհ՜ր,
Անտուն ու անտեր
Ման գաս անընկեր
Աշխարհի վրա:
Քշի՛ր ձիդ, գնա՛,
Գնա՛ Վան քաղաք, Ագռավուքար կա,
Մտի՛ր դու էնտեղ, մինչև օր կգա,
Ռամիկը մինչև կմիաբանի
Ու քեզ կկանչի,
Կկանչի կռվի ընդդեմ բռնության՝
Փշրելու չարի սև լուծն ու շղթան:
Աշխարհը մինչև որ չքանդվի,
Չքանդվի հիմքից ու նորից շինվի,
Ռամիկն օր-արև չի տեսնի, որդի՛...

Միհրը, դրած ականջը հողին,
Ինչքան սպասեց, էլ ձայն չլսեց:
Ու վերջին անգամ կրկին ու կրկին
Նա իր հոր ու մոր հողը համբուրեց,
Համբուրեց լալով սուրբ հողը Սասնա
Ու ցավն աշխարհի, վիշտը ահագին
Սև սարի նման իր կրծքի վրա՝
Ելավ ու հեծավ Քուռկիկ Ձալալին
Ու քշեց դեպի բլուրը Տոսպա:

Վանա իշխանն երբոր տեսավ գալիս է
լեռ մի աժդահա,
- Հայ՛-հա՜յ, - ասաց, - սա որ հասավ, քա-
ղաք կանի տակն ու վրա...

Հարյուր հեծյալ առավ իր հետ, ինքն էլ
հեծած նժույգ իր ձին՝
Բերդից ելավ, քամու նման քշեց գնաց
դեմ Միերին
Ու պնդակուռ պարսպի պես կանգնեց,
կտրեց ճամփան նրա.
- Կանգնի՛ր, - գոռաց ու պնդոլոր1կապը
գցեց քաջի վրա:
Միերի ձին ընկավ կապով ու խճճվեց
հանց թակարդում:
- Հա՛յ-հա՜յ, - թնդաց Միերը գոռ, - էդ ո՞վ է,
որ Դավթի որդուն
Ուզում է նենգ թակարդ գցի
Հանց առյուծի.
Հազա՜ր ամոթ իշխան մարդուն...-
Գոռաց Միերն ու աջ ու ձախ թափահա-
րեց Թուր Կայծակին,
Կապը կտրեց ու կտրատեց, կտոր-կտոր
թափեց գետին,
Թռավ թափով, իր նժույգով բախվեց հսկա
ժեռ քարափին:
Ագռավուքարն էնտեղ բացվեց ու ներս
առավ մեր Միերին
Ու հենց որ ներս առավ նրան, դուռն
ետևից փակվեց կրկին:

Անց են կացել դար ու դարեր, ու էնտեղ
են Միերն ու ձին:

[1]**պնդոլոր** - *պինդ ոլորված*

ՎԵՐՋԵՐԳ

ՎԵՐՏԵՐԳ

Ասում են՝ ամռան խաղաղ մի գիշեր
Հովիվն իր կորած գառն է ման գալիս,
Ագռավուքարի մոտով անցնելիս
Տեսնում է նրա քարե դուռը բաց
Ու ներս է մտնում:

Միերը, այնտեղ՝ քարայրում նստած,
Միտք է անում խոր՝ ձեռքը ծնոտին,
Մեծ Թուր Կայծակին իր գոգը դրած
Ու կողքը կանգնած հրեղեն իր ձին:
- Բարև՛, Միե՛ր:
- Բարո՞վ եկար, հովի՛վ ախպեր,
Ուշ գիշերով ի՞նչ ես փնտրում
Էս քարերում:
- Գառ է կորել, Սասնա՛ Միեր,
Որ չգտնեմ, տերս դժնի
Տունս գլխիս փուլ կբերի,
Ինձ դուրս կանի:
- Էդպես չա՞ր է աշխարհը դեռ...
- Չա՞ր է, չա՞ր է, Սասնա՛ Միեր:
- Էլի էնպես խեղճը դատում,
Զորեղն ուտո՞ւմ...
- Հա՛, Միե՛ր, հա՛:
- Լուծն ու շղթան չե՞ն թոթափում...
- Չէ՛, Միե՛ր, չէ՛:
Ռամիկը դեռ անմիաբան
Ու շա՞տ խեղճ է:
Ապրում են դեռ բաժան-բաժան,

Եվ իշխում է տերը դաժան...
Իսկ դու, Մեհ՛ր, ե՞րբ դուրս կգաս,
Կելնես քարե քո զնդանից:
- Երբ որ կանչե ռամիկը ինձ,
Երբ որ լինեն մեկ-միաբան՝
Ընդդեմ չարի ու բռնության,
Էն օր, ահա՛, դուրս կգամ ես,
Կելնեմ քարե իմ զնդանից,
Որ բյուր-բյուրոց հետ միասին
Քանդենք աշխարհ, շինենք նորից...

Գնա՛, տա՛ր պատգամ հանուր աշխարհին,
Ասա՛, որ Սասնա Մհերն է ասում.
Թող որ միանան ստրուկն ու գերին,
Ելնեն բյուրավոր ու բազմաբազում
Ու հազար ձենով կանչեն Մհերին:
Այնժամ էլ կելնեմ քարե զնդանից՝
Հեծած հրեղեն Քուռկիկ Ձալալին
Ու բռնած ահեղ մեծ Թուր Կայծակին,
Որ զարկենք չարին
Ձարկով ահագին,
Քանդենք բովանդակ աշխարհը հիմքից
Ու շինենք նորից.
Շինենք՝ ուս ուսի տված միասին,
Ուր չարը չքվի, և իշխի բարին,
Քրտինքը խեղճի չկորչի իզուր,
Չմնա աղքատն անճար ու անհույս.
Ցորենը, հովի՛վ, լինի քանց1 մասուր,
Գարին՝ քանց ընկույզ...

[1] **քանց** - *հանց՝ ինչպես*

Ու բաժանվում են հովիվն ու Մհեր:
Հովիվը հրաժեշտ է առնում Մհերից
Ու դուրս է գալիս,
Ու դուռն ետևից փակվում է նորից:

*
* *

Եվ ասում են, որ հովիվն այդ օրից
Շրջում է, անցնում աշխարհից աշ-
խարհ
Ու կոչն է կոչում Սասնա Միերի,
Որ ելնեն բոլոր ու բոլորակամ,
Ելնեն փշրելու բռնության շղթան,
Քանդեն աշխարհը ու շինեն նորից,
Որ տիրեն արդարն ու բարին միայն
Հա՜ր ու հավիտյան...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ճյուղ առաջին

ՍԱՆԱՍԱՐ ԵՎ ԲԱՂԴԱՍԱՐ 3

Առաջին մաս 4
Երկրորդ մաս 20



Ճյուղ երկրորդ

ՄԵԾ Մ'ՀԵՐ 29

Առաջին մաս 30
Երկրորդ մաս 43

Ճյուղ երրորդ

ԴԱՎԻԹ 53

Առաջին մաս 54
Երկրորդ մաս 89

ՎԵՐՋԵՐԳ 135